



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպանաժեռությունը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16284

ՀՅ. Մ. կ.
մայ 1-26



ՀԵԾԵԼԱԶՈՐԻ
ՄԱՐՏՈՎԱՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Մաս 1

357
Խ-Խ

ՀԱՅԱՍՏԱՆ

1980

2010

1956г
ԽՈՎՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԳՈՒՂՅԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՈՎՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԳՈՒՂՅԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՎՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԳՈՒՂՅԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՈՎՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԳՈՒՂՅԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

357

Խ-11

Խ-11

Բ. Գ. Կ. Բ.

ՅԵՒԼԱԶՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄԱՍԻ

(1928)

ՀՈՎՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԳՈՒՂՅԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ



**Боевой Устав
Конницы
Р. К. К. А.
Часть I**

Տրամադրություն. № 2799 (բ) Տիրաժ 1000

2002



~~6172-53~~

ՀՐԱՄԱՆ

•ՈՐՉՐԴԱՅՆ ՍՈՑԻԱԼԻՍՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒ-
ՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ
ԻՈՐՉՐԴԻ

N. 119

26 ապրիլի 1928 թ.

ՄՈՍԿՎԱ

1. Գործադրության մեջ մտցնել սրան կից հայտաբառված՝ ա) Հեծելազորի մարտական կանոնագիրը, Թասն I (Հեծ. Մ. կ. մասն 1—28) և բ) Հրահանդ շախային հեծելական ձիու վարժեցման համար—1928 թ.:

2. Բ. Գ. Կ. Բ. Հեծելազորի ժամանակավոր մարտական կանոնագիրը, մասն I (հրամ. ԽՍՀՄ ՀՊ 1926 թ. № 262) վերացնել:

Թաղմական և ծովային գործերի ժողովրդական
կոմիսոր և ԽՍՀՄ ՀՇԽ նախագահ՝ ՎՈՐՈՇԼՈՅ

(P.T.O.R. 2000)

ՀԱՏՎԱԾ 1

ՔԼԱԽԻ 1.

ԶԻԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ա) ՍԱՆՉԱԾ ՅԵՎ ԹԱՄԲԱԾ ԶԻՄԻ ԳԱՀԵԼԸ:

1. Զին սահմանաց հետո, պետք և կանգնել նրա կողմը, պարանոցին համաստ, յերեսը դեպք գաշտը և արմունկը ծալած աջ ձեռքով բռնել յերկու յերաշանակը ձիու կզակի մոտ, բաժանելով նրանց ցաւցատով, իսկ նրանց ծայրերը (կարած) ազտու կախած ձախ ձեռքի ափի մեջ սեղմել, անցկացնելով նրանց ափի միջով (նկ. 1):

Այդ դեպքում ձին պետք և կանգնած լինի բոլոր չորս վոտի վրա, առանց ձգվելու, վոտերը մարմնի տակ մեկնելու և դլուխը կախ քցելու:

Շարժվելու համար պետք և աջ ձեռքով ձիուն աստիճանաբար առաջ քցել, իսկ կանգնեցնելու համար՝ պահել նրան, յերկու դեպքումն ել թույլ չտալ նրան չյուխը կախ քցելու:

Յերբ ձիավորի վրա թուր կա, այդ դեպքում շարժման ժամանակ նա ձախ ձեռքով պահում և պատյանը ներքեմ ողակի տակից՝ քեզ կորացրած չորս մատով դրսից, իսկ բութ մատով յէս ուկից ու ներսից, առանց յերաշանակների ծայրերը բաց թողնելու:

բ) ԶԻ ՀԵՄՆԵԼԸ, ՅԵՐԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԶԱՏԵԼԸ ՅԵԼ
ԻՇՆԵԼԸ:

3. Զի ՀԵՃՆԵԼԸ Համար Հրաման և արվում—Ակ-
տիք, իշնելու Համար—իջիք:



Նկ. 1.

3. Զի ՀԵՃՆԵԼԸ առաջ, ձիավորը պետք և ծ-
կանգնեցնի և ինքն ել կողքին կանգնի ինչպես ցույց
աված 1-ին հոդվածում:

ՀԵՃՆԵԼԸ կատարվում և յերեք նվազ.

Առաջին նվազ: Դառնալ դեպի աջ, յերասանակներ
պատ վզին դժել, կես քայլ դեպի աջ անել, յերասանա-


ներ աջ ձեռքով հավասարեցնել, ձախ ձեռքի դաստա-
կը, ափը դեպի ցած պահած, դնել յերասանակների վրա
բաշի յետեկ մասի մոտ, յերասանակները բաշի մէ
ֆեղի Հետ սեղմել չորս մատով, իսկ բութ մատին փա-
թաթել այդ փնջի ծայրը, աջ ձեռքով բռնել ասպանդա-
կի փոկը ասպանդակի մոտ և կիսագարձ դեպի աջ դառ-
նալ (նկ. 2):



Նկ. 2.

ՅԵՐԿՐՈՐԴ ՆՎԱԶ: Ձախ վոտը բարձրացնելով, առ-
պանգակի մեջ դնել, ըստ հարավորին խորը, կոչիկէ
ծայրով ձիուն շանհանգատացնել. աջ վոտը վեանից

կորելով աջ ձեռքով թամբի յետևի կեղից (զաշից) բոնել և բարձրանալ ձախ վոտք ու ձեռքերի վրա, ձախ ծնկով թամբին հենվելով. ապա իրանն ուղիղ պահած, տեղափոխել մեկնած աջ վոտք ձիու գալակի վրայով, առանց նրան դիպչելու և դրա հետ միասին աջ ձեռքը յետևի կեղից վերցնել, նրանով հենվել պարզած մասներով թամբի առաջի մասին աջ կողմից. դրանից հե-



նկ. 3.

առ, ծնկները սեղմելով սահուն իջնել թամբի մեջ (նկ. 3):

Յերբորդ նվազ: Աջ վոտք ասպանգակի մեջ զնել նրա գրսի կողմից ու յերկու ասպանգակներն ել պահել

այնպես, վոր նրանց վնեն վոտք թաթի ամենալայն ժամում: Հետո, բաց թողնելով բաշը, յերասանակներն անցկացնել ձախը—ձախ ձեռքի ծկույթի և մատանու (անանուն) մատի միջև, իսկ աջը՝ ցուցամտոի և միջին մատի միջև, յերասանակների ծայրերն անցկացնել ամիկ միջով ու ցուցամտոի վրայով. բուռնցքը սեղմելով, բութ մատով յերասանակները սեղմել ցուցամտութին: Աջ ձեռքով հավասարեցնել յերասանակները, նրանց ծայրերը ցուցամտոի վրայով դցել զետի աջ կողմը և, բառնցքը սեղմելով, յերասանակները պահել բութ մատով: Զախ ձեռքի բուռնցքը պահել յեղունդները դեպի ցած: Աջ ձեռքը, յեթե զենք չի բռնած, դնել ձախ բուռնցքի վրա, ընդլուրում միջին և անանուն (մատանու) մատոներով բաժանել ձախ յերասանակն աջից:

Յերասանակները բոնելու այսպիսի յեղանակը կոչվում է շարային:

Յերասանակներն առանց վոյորելու ոկտօք և դարձնել իրենց ներսի կողմով զետի ձիու պարանոցը. նրանց ոկտօք և խորը բոնել մատոների արմատների մոտ:

Զախ ձեռքն ազատելու անհրաժեշտության դեպքում՝ պետք է յերասանակները թողնել աջ ձեռքում, ինչպես այն դրած եր ձախ ձեռքի վրա, իսկ նրանց ծայրերը ձգել աջ ձեռքի ցուցամտութիւնը վրայով զետի ձախ կողմը:

4. Յերասանակները հավասարեցվում, կարճացվում և յերկարացվում են ձգելով կամ թուլացնելով նրանցից յուրաքանչյուրն առանձին՝ աջ ձեռքի ողնությամբ:

Յերկու յերասանակն ել միանգամից կարճացնելու կամ յերկարացնելու համար պետք է նրանց ծայրերը

բոնել աջ ձեռքով, իսկ ձախը շարժել յերտանակների վրայով իրենից դեպի առաջ կամ դեպի իրեն, վորքան հարկավոր եւ:

Վերոհիշյալը կատարելուց հետո, յերտանակների ծայրերը պետք ե բաց թողնել աջ ձեռքի թաթից և յերկու ձեռքն ել պահել պատշաճ դրությամբ:

5. Յերասանակները բացի «ըստ շարայինի» բըռանելուց, ձիավարության և ձիու զեկավարման նախական ուսուցման համար, պետք ե կիրառել յերասանակները յերկու ձեռքով բանելու («ըստ վարժականի») յեղանակը:

6. Յերասանակները «յերկու ձեռքով» բոնելու ժամանակ, աջ ձեռքով բոնում են աջ յերասանակը, իսկ ձախով՝ ձախը, ընդ վորում յերասանակները պետք, և անցկացնել ճկույթի և անանուն մատների արանքով, ապա ձեռքերի ափերի միջով դեպի վեր, ծայրերն անցկացնել բոունցքի միջով և սեղմել բութ մատով ցուցամատին. բոունցքները պետք ե պահել բութ մատը դեպի վեր, յեղունգները դեպի իրեն:

7. Վերոհիշյալ յեղանակներից մեկով բոնած յերասանակներն այլ կերպ բոնելու համար, համապատասխան հրաժաններ են արվում. յերասանակի ըստ շարայինի կամ յերասանակը յերկու ձեռքով կամ յերտանակն ըստ վարժականի:

Եերբ յերտանակները բոնելու ձեզ չբաժանով ցույց չի արված, յերասանակները պետք ե բոնել ըստ շարայինի:

8. Գիտոց իրնելը կատարվում է յերեք նվազ.

Առաջին նվազ: Յերկու յերասանակն ել տալ ձախ ձեռք, այդ ձեռքով բոնել բաշից նրա յեռերի մտսից, այ-

ձեռքը, դնել թամբի առջևի կեզի վրա և աջ վոտը հանել առպանդակից:

Յերկրորդ նվազ: Հենվել յերկու ձեռքի վրա, մի քիչ բարձրանալ ձախ վոտի վրա, մեկնած աջ վոտը տեղափոխել զավակի վրայով, առանց նրան դիսչելու, աջ վոտը ձախի մոտ դնել, աջ ձեռքով բոնել թամբի յանելի կեղից և սահուն կերպով իշնել գետնին աջ վոտի վրա. դրանից հետո ձախ վոտը հանել առպանդակից, աջ վոտի մոտ դնել, իսկ աջ ձեռքն իջեցնել ուղղաձիգ կերպով:

Յերրորդ նվազ: Բաշը բաց թողնելով, մի քայլ անել զեղի ձախ և յերտանակները ձախ ձեռքից բաց շողնելով, աջ ձեռքով յերասանակները ձիու վզից հանել և բոնել նրանց ձիու կզակի մոտ, ինչպես ցույց է որված 1-ին հոդ.։ Ապա ձախ դառնալով ձախ ձեռք կլեցնել:

Դ) ՀԵԾՆԵԼԼ

9. Թամբի վրա պետք ե նստել աղտօ, պահպանելով մարմնի բոլոր մասերի շարժման աղատությունը. թամբի միջոցով զզալով ձիու բոլոր շարժումները և կարիք յեղած զեպքում ցույց տալ նրան ողնություն կամ հափաղում:

Պետք ե նստել, ըստ հնարավորին խորը յերկու զըստասնկների վրա. իրանի գրաւթյունը պետք ե ուղղաձիգ մնի: Ուսերը պահել աղտօ և հավասար կերպով կտիած (չկուզանալ): Գլուխն առանց յետ զցելու՝ պահել աղիղ, կզակն առաջ չձգել. նայել ուղիղ զեղի առաջ.

10. Աղատ կախ զցած ձեռքերի վերին մատերը պետք ե չոչափեն ձիավորի մարմինը, բայց ուսանց

նրան սեղմելու, նրանց միջին մասը նույնպես պետք է իրանը չոշափի: Ձեռքի գաստակները պահել մի քիչ զերի ներս ծալած, իսկ մատները բոռնցք սեղմած բութ մատները պետք է մի քիչ ծալիլ և նրանցով սեղմել նրանց տակով անցնող յերանակները:³⁾

11. Յերանակներն ըստ շարայիմի բռնելու ժամանակ ձափի գաստակը պահել յեղունդները դեսլի ներքեւ թամբի առաջին կեղի մեջ տեղի վրա այնպես, վոր գաստակը կաղմի նախարազուկի շարունակությունը, իսկ աջ ձեռքը, յեթե զենք բռնելուց ազատ և, գնել ձափի վրա ինչպես ցույց ե տված հող. Յում: Յերանալը յերկու ձեռքով բռնելու ժամանակ, ձեռքերի գաստակները բռնցք արած, պահել նախարազուկի շարունակության վրա:

12. Լավ հարմարեցրած ասպանդակներ ունենալու զեպում, ձիավորի վոտերի աղղիները, ուղղված լինելով զեպի ցած և մի քիչ զեպի առաջ, նրա կաղմը վաճառի համապատասխան, պետք և ամուռ և տափակ կապած լինեն թամբին, իսկ ծնկները պետք և մնան անշարժ և թամբին սեղմած:

Զիավորի վոտի զեպի ձին դարձրած ներսի կողմը ծնկներից մինչեւ կոճերը կոչվում է սրունք և ծառայում և ձին կառավարելու համար: Վոտքի այլ մասը, վոր

) Զիավորի մարմինը բաժանվում է յերեք մասի. յերեի—գլխից մինչև զոտկատեղը, ներքեվի—ծնկներից մինչև կրունկները և միջին—զոտկատեղից մինչև ծնկները.

Ձեռքերը նույնպես բաժանվում են յերեք մասի վերեի—ուսից մինչև արմունկը (թիգոսկը), միջին—արմունկից մինչեւ զաստակը (նախարազուկ) և ներքեի—զաստակները:

ազատ կախ և ընկած ծնկից գեղի ցած, ներսի կողմանվ պետք և չոշափի ձիու կողը. այդ դեպքում կրունկը պետք և թաթի ծայրը բնական կերպով մի քիչ դեպի դուրս դարձրած:

13. Ասպանդակները պետք և պահել թաթի ամենալայն մասում բոլորովին ազատ, թեթեակի հենվելով նրա վրա:

14. Ասպանդակները պետք և հարմարեցրված լինեն այնպես, վոր յեթե ձիավորը ծնկներն ուղղած ասպանդակների վրա բարձրանա (թաթերը գետնին զուգահեռ), թամբի և նատատեղի արանքով բռնցքն ազատ անցնի:

Դ) ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Ընդհանուր ցուցումներ.

15. Զի զեկավարելու գլխավոր միջոցները յերեքն են, սրունքները, իրանի քենումները: յերանակները:

Սրունքներով ձիավորն ստիպում և ձիուն առաջ գնալ և զեկավարում և նրա յետքը. իրանի թեքումներով՝ նպաստում և զեկավարելուն. յերանակներով՝ կանգնեցնում կամ դանդաղեցնում և շարժումը և զեկավարում և մարմնի առաջքը:

Զեկավարելու գլխավոր միջոցներից զատ, կա նաև սժանդակ միջոց—խրանիները, վորոնք յերկու նշանակություն ունեն՝ սրունքների գործողությունն ուժեազացնելու և ձիուն պատժելու համար, յեթե նա հակառակի կամ անհնազանդություն ցույց տա:

16. Սրունքներն ու յերանակները կոչվում են ներսի և դրաի: Ներսի սրունք և յերանակ կոչվում են

նրանք, վորոնք բոլոր չարժումների ժամանակ զտնված
են այն կողմում, վոր կողմի վրա կատարվում և շար-
ժումը՝ գրսինը—նրանց հակադիրները։

Գործողություններ սրություններով։

17. Սրունքներով ղեկավարումը կայանում և նրա-
նում, վոր ձիավորը յերկու սրունքները միակերպ սեղ-
մում և ձիու կողքերին կամ նրանցից մեկն ավելի ու-
ժեղ և սեղմում։

Յեթև սրունքի սեղմելն անբավարար է, այն ժա-
մանակ ձիուն ավելի խիստ ստիպելու համար սրունք-
ներով զարկեր են տալիս։

Սրունքները պետք ե սեղմել, կամ նրանցով զար-
կել յերկու փորքաշների միջև (յերկու բաժան փորքաշ-
ներ յեղած դեպքում) կամ մեկ փորքաշի դեպքում յե-
տեւի յեղրի մոտ։

Սրունքով այնպես պիտի զործել, վոր նրանով թե
սեղմելու և թե խփելու ժամանակ ձիավորը ծնկները
թամրից չհեռացնի և շբարձրացնի ու չփոխի նստար-
վածքը։

18. Յերկու սրունքների համաշափ և միաժամանակ
սեղմելով ձիուն՝ յետքը դեպի առաջը բերել, առաջքի
աշխատանքները հեշտացնելու համար. այդ կիրառվում
և ձին առաջ ուղարկելու, ավելի փոքր քելքի անցնելու և
կանդնեցնելու համար, նույնպես և նրա համար, վոր
ձին յետքն այս կամ այն կողմը չդցի։

Ձիու կողքը կորացնելու համար պետք է ուժեղա-
ցնել համապատասխան սրունքի սեղմումը։

Վարեկ սրունքի սեղմումով ձին յետքը դցնամ և հա-
կառակ կողմը, իսկ հակադիր սրունքը կանանալուրում
և կանգնեցնում և այդ շարժումը։

Իրամի թեքումները.

19. Իրանի թեքումները աեղափոխում են ձիավորի
և ձիու ծանրության կենտրոնը, ուստի նպաստում ձիու
շարժումներին և դարձումներին։

Դեպի առաջ թեքումը թեթեվացնում է ձիու յետ-
քը. դեպի յետ թեքումը թեթեվացնում է առաջքը, իսկ
դարձումի կողմն արած թեքումն ովհում և զարձում
կատարելուն։

Իրանը զեպի մի կողմը թեքելիս պետք է մարմնի
ֆանրությունը զցել համապատասխան նստոսկը (զբա-
ռապկը) վրա, թամբի մեջ շարժվել և կողքը չկորտ-
ցնել։

Գործողություններ յերասանակներով

20. Յերասանակները ծառայում են ձիու առաջք
շեկավարելու համար և կապ են ստեղծում ձիավորի
ձեռքի և ձիու բերանի միջև, յերասանակները յերբեք
չպետք է ծառայեն իբրեւ միջոց թամբի վրա պահ-
վելու համար։

Յերախճանի ճնշմամբ յերասանակները ներգոր-
ծում են ձիու լեզվի վրա, ստորին ծնոտի անատամ մա-
սկի և բերանի անկյունների վրա. իսկ անմիջական ճընչ-
մամբ —նրա պարանոցի վրա։

Յերասանակների միջոցով ցույց են տալիս շարժման
ուղղությունը, նույնպես և հաստատում են գլխի ու վր-
ույն դրությունը (ուզզությունը)։

Խելպես տեղում, նույնպես և զնալու ժամանակ
յերասանակները պետք է ձգված լինեն այնչափ, վոր-
ույնը ձիավորը շարօնառէ զգու ձիու թերանի թեթեվ
մեղքիթությունը։

21. Աւղիդ շարժման միջոցին (ուղղակիւ ուղղություն) յերասանակները պետք եւ հավասարառչափ աշխատեն, իսկ դարձումների ժամանակը յերբ ձին պետք եւ դաշնա գեղի շարժման կողմը (կողքի ուղղություն) ներսի յերասանակը ցօւյց եւ տալիս շարժման ուղղությունը, ձիուն ստիպելով համապատասխան աչքով տեսնել այդ ուղղությունը. դրսի յերասանակը, դնելով և պահելով նրա վզի վրա՝ կանոնավորում եւ ձիու առաջի մասի շարժումը:

Զիուն այս կամ այն կողմն ուղղելու համար անհրաժեշտ է ամելի ուժեղ սեղմել համապատասխան ներսի սրունքը:

22. Յերասանակը բաւացնելը կարող եւ տեղի ունենալ. 1) դաստակները (դաստակը) առաջ տալով, 2) ձեռքերը (ձեռքը) առաջ տալով, 3) ձեռքերը (ձեռքը) և իրան առաջ տալով:

Յերասանակը ճգիլը կարող եւ տեղի ունենալ. 1) յերասանակը հավասարեցնելով, 2) ձեռքերն և իրանը յետ տալով, 3) ձեռքերը (ձեռքը) յետ տալով և 4) դաստակները (դաստակը) յետ տալով: Վորպեսզի դեպի իրեն ճգիր աջ (ձախ) յերասանակը և սեղմի վզին ձախը (աջը), պետք ե՞-

ա) յերասանակներն ըստ շարայինի բռնած ժամանակ—ձախ ձեռքի դաստակը դարձնել դեպի աջ (դեպի ձախ), մոտեցնելով իրեն բութ մատը (ձկութը), և ժիշվույն ժամանակ դաստակը տանել դեպի աջ (դեպի ձախ),

բ) յերասանակը յերկու ձեռքով բռնած ժամանակ ժուեցնել ձեռքերից մեկի ճկութն իրեն, մի քիչ առաջ:

առև բութ մատը, վորի համար պետք ե ձեռքի դաստակը յեղունքներով մի քիչ դարձնել դեպի վեր և զատակը կախ ցցել բուռնցքի լայնության չափով. մյուս ձեռքի դաստակն առանց յերասանակը թուլացնելու տանել գեղի ներս, յերասանակը ձիու վզին սեղմելով:

23. Ազատ հրամանով պետք ե ազատել սրունքները յերասանակը թուլացնել այնքան, վոր ձին կարողանա ազատ յերկարացնել վիզը:

24. Զգաստ կամ յերասանակ հրամանով հավաքել յերասանակները, ընդունել համապատասխան նըստվածք և ձին սրունքների մեջ առնել:

25. Զին հավաքել —նշանակում և նրա իրանին այնպիսի դրություն տալ, վորից նրա համար ամենահարմարը կմնի ցանկացած շարժումն ոնել ցանկացած ուղղությամբ:

Զին հավաքված և յերբ նրա յետին վոտերն իրանի տակ են բերված, զլուխը ծոծրակի մասում յետ տված և վիզը քիչ բարձրացրած: Զիվարը ձիուն հավաքում և սրունքների և յերասանակի գործողությունների համակցությամբ:

26. Զիուն ուղղություն տալ —նշանակում և նրա դործորակի մասում մի քիչ դարձնել (դլուխը չթեքել) դեպի այս ու այն կողմը: Զիու վիզը պետք ե ուղիղ պահած լինի:

Զիուն ուղղություն է տրվում յերասանակի միջոցով:

7) Քելքեր, ՆՐԱՆՑՈՎ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵԿ ՄԵԿ ՔԵԼՔԻՑ ՄՅՈՒՄԸ ԱՆՑՆԵԼ:

27. Քելքեր կոչվում են ձիու դեպի առաջ արած շարժումները զանազան արագությամբ —ինչպես են՝



քայլ, վարդ, արշավ, դաշտային արշավ և սրարշավ :

28. Կրկնակի ժելք և կոչվում ըստ ձիու շարժման արագության հետեւյալ քելքը. որինակ քայլի նկատմամբ կրկնակի քելք կլինի վարդը, վարդի նկատմամբ — արշավն և այլն :

29. Բացի վերոհիշյալ քելքերից, մարզարանական ձիավարության ժամանակ, ձիերի վարժեցման և նըրանց մարզելու ժամանակ կիրառվում է ուժնացրած և նվազեցրած վարդ և նվազեցրած (մարզարանական) արշավը :

30. Քայլ—այն քելքն ե, վորի արագությունն և 10 րոպեյում—1 կիլոմետր :

Քայլով շարժման ժամանակ ձին վրաքերով չորս հաջորդական հարված և տալիս գետնին տարբեր ժամանակամիջոցում (ամանակ, տեմպ) :

31. Վարդ—այն քելքն ե, յերբ ձին միաժամանակ դնում և գետնին խաչաղիք վոտքերը, վորից և յերկու հարված և լսվում: Վարդն արագության տեսակետից տարբեր և լինում — նվազեցրած, շարային, և ոժեղացրած:

Շարային վարդի արագությունն և 5 րոպեյում—1 կիլոմետր :

32. Ուժեղացրած վարդի միջոցին ձին պետք և ըստ հնարավորին ավելի առաջ տալ սրունքներով, բարձրացնելով նրա գլուխուր յերասանակով :

33. Նվազեցրած վարդի միջոցին պետք է ձին տանել սրունքների մեջ, պահելով նրա առաջի մասը յերասանակով և նրանով փոքրացնել շարժման արագությունը. այս դեպքում պետք է պահանջել քելքի տեմպի հատակի պարզություն :

34. Շարային վարդով ձիավարության ժամանակ, պետք ե իրանն առաջ տալ, ուժեղացնել ծնկների սեղմումը և նստվածքը պահպանելով, սահուն կերպով իջնել թամբի վրա ձիու մեկու մեջ քայլի հետ միաժամանակ :

Յերբ ձիավորն իջնում ե թամբի մեջ, ձիու առաջի ձախ վոտքը դնելու հետ միաժամանակ, այդ գեղություն և շարային վարդով ձախ վորից, և ընդհակառակն—աջ վոտից յեթե իջնում ե թամբի մեջ ձիու աջ վոտը գետնին դնելու հետ միաժամանակ :

35. Մարզարանական ձիավարության ժամանակ ձիավորը պետք ե իջնի թամբի մեջ ձիու ներսի վոտի հետ միաժամանակ :

36. Վարդով յերկարատեղ շարժման ժամանակ պետք ե վոտը փոխել, փոփոխակի շարժվելով, պյախնակնելով՝ իջնել թամբի մեջ մերժ աջ վոտը, մերժ ձախ վոտը գետնին դնելիս :

37. Ուսուցման համար կիրառվում է վարժական վարդով ձիավարությունը, վորի ժամանակ ձիավորը պահպանելով նստվածքը, իջնում ե թամբի մեջ ձիու յուրաքանչյուր քայլի հետ միաժամանակ :

38. Արշավ—այն քելքն ե, վորի արագությունն և 3¾ րոպեյում 1 կիլոմետր :

Արշավով ձին գնում է յերեք նվազով (տեմպով), առաջին նվազով՝ ձին առաջ և գնում դրսի յետեկի վոտքը և տեղափոխում և նրա վրա իրանի ամբողջ ծանրությունը. յերկորդ նվազով՝ դեպի առաջ և իրանի տակն է գնում ներսի յետեկի վոտը և նրա հետ միաժամանակ գետնին է գնում դրսի առաջի վոտը. յերրորդ նվազով իրանի ծանրությունը գցում է ներսի առաջի

վոտի վրա . հետո իրանի ծանրությունը նորից և գը-
շում յետելի դրսի վոտի վրա (առաջին նվագ) և այլն :

Զին արշավով կարող ե զնալ աջ կամ ձախ վոտից :
Յերբ ձին գնում ե աջ վոտից , այն ժամանակ իր տակն
ե գնում և ավելի առաջ յետելի աջ վոտը , իսկ առաջի
աջ վոտը տանում ե ավելի առաջ և ձախից ավելի
բարձր : Զախ վոտից սկսած արշավի ժամանակ կատար-
վում ե հակառակը :

Դեպի աջ ձիավարության ժամանակ ձին պետք
է քշել արշավով աջ վոտից , դեպի ձախ ձիավարության
ժամանակ—ձախից :

39. Արշավի անցնելու համար պետք ե սկզբից ձի-
ուն հավաքել , նրան ուղղել այն կողմը , վոր վոտից
ձին պետք ե սկսի արշավով գնալ . դրանից հետո , յեր-
կու սրունքները պետք ե սեղմել , բայց ավելի ուժե-
ղացնելով դրսինը , այսինքն այն վոտի հակառակ կող-
մի սրունքը , վորից ձին պետք ե սկսի արշավով գնալ ,
տպա հարվածել ներսի սրունքով , սեղմելով դրսինը ,
միաժամանակ ներսի յերասանակը թուրացնել :

Արշավի անցնելու ժամանակ , դրսի սրունքի ավե-
լուրդ սեղմելու և ներսինի անդրավարար լինելու դեպ-
ւում , ձին յետքը դեպի մի կողմը կ'ացի :

40. Արշավով շարժման դեպքում պետք ե թամրի
մեջ խորը նստել , իրանով ուղեկցելով ձիու շարժմա-
նը :

41. Դաշտային արշավ—քելքի արագությունն և
2½ րոպեյում 1 կիլոմետր :

Դաշտային արշավն ել նույնպիսի քելք ե , ինչպես
և արշավը , բայց ձիու շարժմանը մեծ ազատություն և
արվում . ձին գնում է ավելի մեծ թափով , ցանկացած

վոտից , ձգված վզով , պահպանելով յերասանակի ընդ-
դիմագրությունը :

42. Դաշտային արշավին անցնելը կատարվում է
այնպես , ինչպես արշավին անցնելը , բայց անցնելուց
հետո ձիուն հարավորություն և տրվում ձգվելու :

Դաշտային արշավի ժամանակ հարկավոր և ծընկ-
ներն ավելի ուժեղ սեղմել թամրին , ուժեղացնել աս-
պանդակների վրա հենվելն և զոտներն ավելի խորը
դնելով նրանց մեջ իրանը թեքել մի քիչ առաջ , առանց
նստատեղը թամրից բաժանելու :

43. Սրարշավ—քելքը կատարվում է ձիու սմբողջ
թափով :

Սրարշավ շարժման համար պետք է յերկու ձեռ-
քերն ել տանել դեպի առաջ և դեպի ցած այնքան , վոր
ձին հարավորություն ունենա ձգվելու և ամենամեծ
արագությամբ գնալու . այս դեպքում սրունքներով և
խթաններով գործելով , պետք ե զաշտային արշավի
համար նստավածքի կանոնները կիրառել :

44. Վորեն քելքով տեղից շարժվելու կամ ավելի
նվազ քելքից ուժեղին անցնելու համար հրամաններ են
տրվում . բայլավ , վարգով , արշավով , դաշտային ար-
շավով—ՄԱՌՇ . իսկ սրարշավով շարժում սկսելու և
նրան անցնելու համար՝ արշավով , ՄԱՌՇ-ՄԱՌՇ :

45. Ավելի արագ քելքից նվազին անցնելիս «մա՛րշ» ,
կատարողական հրամանը չի տրվում , այլ միայն տըր-
վում և յերկարածիք այն հրամանը , վորը նշանակում է
նոր քելքը , վորի համաձայն և տեղի յե ունենում կա-
տարումը :

46. Մարզարանական ձիավարության ժամանակ ,
կրծաս վարգով շարժվելու համար , հրաման և տըր-

Ա) ԿԱՆԴԱՌԱՌՈՒՄ

վում կրնատ վարգով—ՄԱՌՇ : Վարդն ուժեղացնելու համար հրաման ե տրվում վարգն ավելացրու—ՄԱՌՇ : Վարգը պակասեցնելու համար հրաման ե տրվում, պակսեցրու: Շարային վարգից վարժականին անցնելու համար և ընդհակառակը՝ հրաման ե տրվում. վարժական վարգով կամ շարային վարգով—ՄԱՌՇ :

47. Յեթե հրաման ե տրվում «վարդով», առանց ցույց տալու վարժական կամ շարային, այդ դեպքում ձիավորներն միշտ շարժվում են շարային վարգով, համաձայն հոդվ. 34:

48. Յուրաքանչյուր շարժումն սկսելուց առաջ հարկավոր ե ձիուն հավաքել, վորի համար անհրաժեշտ և ուժեղացնել յերկու սրունքների սեղմումը, յերասանակները մի քիչ հավաքել, իսկ ձեռքերի դաստակները մի քիչ բարձրացնել: Շարժումն սկսելու հետ ձեռքի դաստակներն և սրունքները դնել նախկին դրության մեջ:

49. Զին տեղից՝ վորմեկ քելքով առաջ քշելու ժամանակ հարկավոր ե նրան հավաքել, վորից հետո մի քիչ թուլացնել յերասանակը, առանց սրունքները թուլացնելու և դրանով ստիպել ձիուն սահուն կերպով շարժվել առաջ:

50. Արագ քելքից նվազին անցնելու ժամանակ, պետք ե սեղմել սրունքները և իրանը մի փոքր յետ տալ, ձիուն սահուն կերպով նոր քելքին անցկացնել, վորից հետո դադարեցնել սրունքների և յերասանակների ուժեղացրած դորժողությունը:

51. Կանդառումը շարժման դադարեցումն ե: Զին կանգնելուց առաջ պետք ե հավաքել, իսկ կանգնեցնելուց հետո—չորս վուսերի վրա հավասար պահել:

52. Կանդառնելու համար յերկարաձիգ հրաման և որվամբ ԿԱՌՇ ԱՌՇ: Այդ հրամանով պետք ե ուժեղացնել սրունքների գործողությունը և իրանը մի քիչ յետ տալով, թեթև ձիուն սահնձը քաշելով ստիպել ձիուն դլուխը յետ տալ և հետո սահուն կանդառնել:

Կանդառնելուց հետո ձիավորի իրանը պետք ե յերկարաձիգ դրություն ընդունի:

Արագ քելքերի ժամանակ կանդառումը կատարվում ե նախապես նվազ քելքերի անցնելով:

Բ) ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՏԵՂՈՒՄ

53. Դարձումները տեղում կատարվում են.

ա) $\frac{1}{8}$ շրջան (կես-դարձ դեպի աջ և դեպի ձախ),

բ) $\frac{1}{4}$ շրջան (դեպի աջ և դեպի ձախ) և

շ) $\frac{1}{2}$ շրջան (դեպի աջ և դեպի ձախ, յետ):

54. Դարձումները տեղում կատարվում են ձիութե յետքի և թե առաջքի մասի վրա. առաջին դեպքում դարձումի առանցքն անցնում ե ներսի յետերի վոտով, իսկ յերկրորդ դեպքում—ներսի առաջի վոտով:

55. Յետքի վրա դարձում կատարելու համար պետք ե ձին կանգնեցնել հոդվ. 51-ի, համաձայն ներսի սահնձը հավաքելով՝ ձիուն ուղղել դեպի դարձման կողմը, ապա իրանը դեպի դարձի կողմը թեքելով և դրսի յերասանակը ձիու վզին սեղմելով ստիպել, վոր նա ուժերը գարձնի դարձի կողմը: Դրսի սրունքը թույլ

չողեաք և տա ձիուն յետքը մի կողմ զցելու, ներսի սրունքը ստիպում է ձիուն կողքում կեռանալ—սրունք-ների, իրանի և յերասանակների միաժամանակ դործողությունը ստիպում է ձիուն առաջքը մի կողմ տանելու, դրսի վոտները ներսի վոտների վրայով անցկացնելով և միենույն ժամանակ թույլ չտարով ձիուն յետ գնալու:

Դարձի վերջում պետք է ձիու շարժմանը դիմարեկ ներսի սրունքով, իսկ դրսի յերասանակով կանգնեցնել նրան:

56. Առաջքի վրա դարձում կատարելու համար պետք է ձին կանգնեցնել և հավաքել համաձայն հողի. 51-ի, վորից հետո յերասանակներով ձիու առաջքը պահել առաջ շարժվելուց նրան դրսի յերասանակով ուղղել գեղի յետքի շարժմանը հակառակ. դրանից հետո, դրսի սրունքն ուժեղացնելով և իրանը մի քիչ թեքելով յետքի շարժման կողմը, սրունքով ստիպել ձիուն յետքը շարժել գեղի պահանջած կողմը:

Դարձի վերջում պետք է յետքի շարժմանը դիմարեկ ներսի սրունքը և ձիու դլուխն ուղղել պահելով, կանգնեցնել նրան:

57. «Առաջքի վրա—աջ դարձի» ժամանակ ձիու յետքը պետք է զցել գեղի ձախ, «ձախ դարձի» ժամանակ—գեղի աջ:

58. Դարձումները կատարվում են հետեւյալ հրամաններով.

ա) $\frac{1}{8}$ չըջանի չափով—կիսադարձ դեպի աջ (դեպի ձախ) —ՄԱՐՇ:

բ) $\frac{1}{4}$ չըջանի չափով—դեպի աջ (դեպի ձախ) —ՄԱՐՇ և

դ) $\frac{1}{2}$ չըջանի չափով—դեպի աջ (դեպի ձախ) յետ ՄԱՐՇ:

Այդ հրամաններով ցույց տված դարձումները միշտ կատարվում են ձիու յետքի վրա: Առաջքի վրա դարձում կատարելու համար «մարշ» հրամանից առաջ առվելացվում է—առաջքի վրա:

Ժ) ՅԵՏ ՏԱԼՅ

59. Յետ տալյ ձիու շարժումն է ուղիղ գծով դեպի յետ, վորի ժամանակ նա առաջի վոտքերը տանում և յետեկի վոտքերի յետեկից:

Յետ տալյ կատարվում է քայլով և թույլատրվում և միայն ուղիղ կանգնեցրած և հավաքված ձիու վրա: Այդ շարժումն սկսվում է յետեկի վոտքերից, ուստի ձիավորը պարտավոր է ձիու յետքը թեթևացնել իր իրանը մի քիչ առաջ տալով. Հետո պետք է յերկու յերասանակները մի քիչ ձգելով և սրունքները սեղմելով ստիպել ձիուն 3-4 քայլ յետ գնալ: Այն ըստելին, յերբ ձին սկսում է յետ գնալը, ձիավորն իր իրանը պետք է պահի ուղղահայաց դրությունը: Յետ տալուց հետո կանգառման ժամանակ, ձիավորն իր իրանը յետ և տալիս յերասանակը քիչ թուլացնելով և սրունքների դործողությունն ուժեղացնելով:

60. Յետ տալյ կատարվում է յուրաքանչյուր 3-4 քայլից հետո կանգնեցնելով: Յետ տալու չափը 9-12 քայլ է:

61. Յետ տալու համար հրաման և տրվում. դեպի յետ հավասար—ՄԱՐՇ:

**ՅԵՍ ԱՏԱԼՄ ՎԵՐՋԱՑՆԵԼՈՒ ՀԱԺՄԱՐ ՀՐԱՄԱՆ Ե ԹԱՐ-
ԳՈՎԱ. ԿԱՆԳ ԱՌԻ :**

62. Շարժման ժամանակ յետ տալու համար պետք
է նախապես ձին կանգնեցնել, հավաքել նրան և ապա
արդեն սկսել յետ տալը: Դեպի առաջ շարժումը նախ-
կին քելքով շարունակելու համար հրաման է տրվում—
ԱՌԱՌ:

ԳԼՈՒԽ 11

ՄԻԱԶԻ ԶԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ա) ԶԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԿԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

63. Ուղղակի ուղղությամբ ձիավարության ժա-
մանակ, ձիավորը պետք է ձին քշի սրունքների միա-
կերպ սեղմումով և հետեւ, վոր ձին գլուխն ուղիղ
պահի: Զիու յետքը դեպի մի կողմ քցելուն հակաղըր-
վում և համապատասխան սրունքի ավելի ուժեղ դոր-
ծողությունը:

բ) ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՔԵԼՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ

ՃՐՁՈՒՄՆԵՐ

64. Դարձումներն և շրջումները ծառայում են չար-
ժման ուղղության փոփոխության համար, դարձում-
ներն արվում են $\frac{1}{8}$, $\frac{1}{4}$ և $\frac{1}{2}$ շրջանի չափով, իսկ շրջու-
մները՝ շրջանի ցանկացած մասի չափով, մինչև «առաջ»
հրամանը: Բոլոր դարձումների և շրջումների ժամանակ
յերկու սրունքն եւ հարկադրում են ձիուն առաջ
շարժվելու, ներքին յերասանակն ուղղություն և
տալիս ձիուն, ցույց տալով նրան դարձումը
կամ շրջումը, իսկ ներսի սրունքը ստիպում և
կորացնել ներսի կողքը և ձիուն թույլ չի
տալիս ներս ընկնել: Արտաքին յերասանակը
վորոշում և դարձի մեծությունն ու ձեւը, իսկ դրսի
սրունքը ստիպում է ձիու յետքին գնալ առաջքի հետ-
քով և թույլ չի տալիս այն դուրս քցելու:

Դարձումը պետք է կատարել այնպես, վոր ձին եւ
առաջքով աղեղ գծի: Դրա համար պիտք է մի քիչ ու-

Ժեղացնել սրունքների դործովությունը, ներսի յե-
սանակը քաշել, նրանով ցույց տալով նոր ուղղությու-
նը, միենույն ժամանակ արտաքին յերասանակը սեղ-
մել ձիու վզին. դարձումն սկսելիս, իրանը թեքել դե-
պի ներս և միենույն ժամանակ թուլացնելով ներսի
սրունքի դործողությունը, արտաքին սրունքի սեղմե-
լով, կառավարել ձիու յետքի շարժումը:

65. ¼ շրջան դարձում կատարելու համար հրա-
ման և տրվում. դեպի աջ (դեպի ձախ) —ՄԱՌՇ : ½ շր-
ջան դարձում կատարելու համար հրաման և տրվում.
կես դարձ դեպի աջ (դեպի ձախ) —ՄԱՌՇ :

66. Յետ դարձի համար հրաման և տրվում.
դեպի աջ (դեպի ձախ) յետ դարձ —ՄԱՌՇ : Յեթե ձիա-
վորը շարժման մեջ ե գտնվում, նա այդ հրամանով
ձին կանգնեցնում ե, հետո դառնում ե յետ, համա-
ձայն հոդվ. 64-ի և «առաջ» հրամանով շարունակում
է շարժումը հակառակ կողմը՝ նախկին քելքով:

67. Շարժումը շրջանի այլ մասերի չափով փոխե-
լու համար ծառայում են շրջումները (թեփի շրջում):
Վորի համար հրաման և տրվում, աջ (ձախ) թելին ա-
ռաջ —ՄԱՌՇ :

Շրջումը կատարվում ե դարձի կանոններով: Յերբ
ձիավորն ընդունում ե ցանակացած ուղղությունը հր-
րաման և տրվում. ԱՌԱԶ : Այդ հրամանով ձիավորը
շարունակում է շարժումն ուղիղ դեպի առաջ:

Դ) ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՅԵՎ ՇԱՐԺՈՒՄ ԴԵՊԻ ԱԶ, ԴԵՊԻ ԶԱԽ ՅԵՏ


68. Ուղղության փոփոխությունը ձիամարզար-
նում կատարվում է յերկու յեղանակով. 1) ձիամար-

զարանի մեջտեղով մի պատից
դեպի մյուսը ուղիղ անկյունով
2) շեղակի մի անկյունից դեպի
մյուսը շեղագծով կարճ պատից
դեպի յերկարը դուրս գալու
ժամանակ:

Ուղղությունը փոխելու հա-
մար հրաման և տրվում.
ուղղությունը փոխել - ՄԱՌՇ :


Առաջին դեպում ուղղու-
թյան փոփոխությունը կատար-
վում և իբրևու դարձումով (ն. 4):
Յերկը դուրս մարզակամանը
տրվում և այն հաշվով, վոր-
պեսզի ձիավորը կարողանա-
անցնել վեց քայլ յերկար պատի
ուղղությամբ և ապա փոխել
ուղղությունը, ձին ուղղելով
դեպի ձիամարզարանի հակազիր
պատի կետը (6 քայլ չհասած
անկյունին ըստ շրջագծի (նը-
կար 5))

Նկ. 4.



Նկ. 5.


Յեթե ուղղության փոփոխությունը կատարվում է արշավի ընթացքում, այդ գեղքում հակադիր պատին 6 քայլ չհասած ձին պետք է կրճատ վարդով քշել և մոտենալ պատին, նրան նորից արշավակի քշել մյուս (ներսի) վոտից ոկսելով:



Նկ. 6.

69. Պտույտ կոչվում է այն շարժումը, վոր կատարվում է 6—9 քայլ տրամադիծ ունեցող շրջանի

վրա: Պտույտ կատարելու համար հրաման է տրվում: Պտույտ դեպի աջ (դեպի ձախ)՝ ՄԱՌՇ: Այդ հրամանով հարկավոր է կամաց-կամաց շրջանային շրջում առել, վորի համար, սեղմելով սրունքները (ներսինն ավելի ուժեղ) ներսի յերասանակը քաշել արտաքինն առանց թռւացնելու և իրանը թեքել դեպի շրջանի ներսը:



Նկ. 7.

Ձին յերասանակների և սրունքների այլպիսի գործողությունից պետք է կողքը կորացնի և դնա շրջագծով այնպես, վոր յետեվի վոտները գնան առաջինների հետքով (Նկ. 6): Պտույտն ավարտելուց հետո, շարժումը շարունակվում է դեպի այն կողմը,

դԵպի վոր կողմը շարժվելիս և յԵղԵլ ձիավորը պտույտից առաջ:

70. Դեպի յԵտ շարժման համար հրաման և տրվում դեպի աջ (դԵպի ձախ) յԵտ դարձ—ՄԱՌՇ:

Այդ հրամանով հարկավոր ե սկզբից պտույտի կերպն անցնել գործելով յԵրասանակով և սրունքներով (Հոդ. 69) և յԵրբ ձին այդ կես պտույտը կանցնի, պետք ե ուղղություն վերցնել դեպի դարձի կողմը և դնալ կիսադարձ, դեպի ձիամարդարանի պատը, վորին հասնելով, նրա ուղղությամբ շարժվել դեպի հակառակ կողմը (Նկ. 7):

ԵԵթե «դԵպի աջ (դԵպի ձախ) յԵտ» շարժումը կատարվում է արշալի ժամանակ, պտույտի առաջին կերպն անցնելուց հետո, ձին պետք է քչել կրծառ վարդով և ձիամարդարանի պատին մոտենալուն պես, նորից քչել արշավակի մյուս (ներսի) վորից սկսելով:

71. Դեպի յԵտ շարժումը կարելի յէ կատարել դեպի հակառակ կողմը, այսինքն դեպի աջ-ձիավարության ժամանակ դեպի ձախ, յԵտ և ընդհակառակը: Արդպիսի դեպքերում հարկավոր ե ձին տանել կոս դարձ դեպի ձիամարդարանի ներսը 6—9 քայլ և հետո դլուին ուղղելով դարձի կողմը կես-պտույտ անել դեպի պատը:

գ) ԽՈԶԸՆԴՈՑՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

72. Զիու ուժին համեմատ խոչընդուները հաղթահարվում են նրա ցատկումներով:

Ցատկումները լինում են. ա) խոչընդունի վրայով՝ դեպի վեր և լայնությամբ, բ) ներքեվից դեպի վեր և դ) վեցեվից դեպի ներքեւ:

73. Խոչընդուների հաղթահարումը կարող է կատարվել զանազան քելքերի ժամանակ, նայած խոչընդուների չափին և տեսակներին, նույնպես և գետնին ու պարագային, վորի ժամանակ նրանց պետք ե հաղթահարել: Վորպես կանոն, լայնությամբ խոչընդուները հաղթահարվում են ուժեղացնելով քելքը, իսկ բարձրությամբ՝ նվազեցնելով քելքը:

Վար թուչելը կատարվում է քայլելիս կամ վար թուչելուց առաջ նվազեցնում են քելքը:

74. Վորպես կանոն, խոչընդուն միշտ անցնում են չփակ ուղղությամբ, բայց ուսուցման ժամանակ, խոչընդուները պետք ե. անցնել նաև շեղակի կերպով:

Զին դեպի խոչընդուն պետք ե տանել յԵրասանակով և սրունքներով, նրան հնարավորություն չտալով մի կողմ նետվելու և ձգվելու: Խոչընդունին մոտենալիս ձիավորը պարտավոր է ձիու յԵրասանակը աստիճանաբար թուլացնել: Դրանով նրան պետք ե հնարավորություն տալ վիզը ձգել՝ թեթեվ և առանց հարկադրանքի ցատկում կատարելու համար: Զիու դիմանելու դեպքում, ձիավորը պետք է սրունքների ուղնությամբ նրան յԵռանդուն կերպով առաջ մղի, հարկ յԵղած դեպքերում, վործածելով նաև խթանները:

75. Վորպեսզի ձին կարողանա ցատկումը ձիշտ հաշվի առնել, ձիավորը չպետք է ճնշի նրան յԵրասանակի և սրունքների ավելորդ շարժումներով:


76. Ցատկումի ժամանակ ձիավորը պետք է պահպանի նույն նստվածքը, ինչ վոր կար մինչեւ ցատկումը, ազատություն տալով ձիու գլխի և վզի շարժումներին: Ցերասանակի թուլացնեն ու ձգելը չպետք ե թուլացնեն կամ ավելացնեն ձիու հենվելը յԵրախճանի վրա:




Ավելի պինդ նստելու համար, ցատկումի ժամանակ, պետք է ծնկներն ավելի ուժեղ սեղմել թամբին և, ըստանվելով թամբից, իրանը փոքր ինչ առաջ տալ:

77. Թռչելով նստելն և վար թռչելը կատարվում է նույն կանոններով, ինչ վոր ցատկումները խոչընդութիւնիվ:


78. Զիավորներին ցատկումներ կատարելու ուսուցման, նույնպես և վարժեցնելու համար, պետք է ունենալ մշտական տիպի և տեղափոխելի խոչընդութիւններ ձիամարզարանում սարքելու համար (նկ. 8, 9, 10, 11 և 12):




նկ. 8.



նկ. 9.




նկ. 10.



նկ. 11.

79. Զիավորին կտրտուկ վայրում ձիավարության մեջ վարժեցնելու համար ծառայում է ձիավարությունը զանազան ուղղությամբ սարքած արգելքների և հաստարանների արանքներով, վորոնց միջով անցնելով և նբանցից մի քանիսին հաղթահարելով, նա վարժը վում և ձիուն ակտիվ կերպով կառավարելու գործում:



նկ. 12.

Այդպիսի ձիավարությունը տեղի յե ունենում կամ ձիամարզարանում կամ հատուկ կահավորված հրապարակներում, ընդ վորում խոչընդութիւնները պատրաստվում են այնպես, ինչպես նրանք հանդիպում են վայրում, զանազան չափերի և այն հաշվով, վորպեսզի բավարարեն վարժության պահանջները, համակերպվելով ձիավորների և ձիերի պատրաստության աստիճանի հետ:

80. Խոչընդութիւնները հաղթահարելու համար հրաման և տրվում. դեպի այս ինչ խոչընդութը (խոչընդութները) քելք—ՄԱՌՇ: Վերջին հրամանով, ձիավորը հեռանում է ձիամարզարանի պատից, և ցույց տված ուղղությամբ շարժվելով, հաղթահարում է իրեն նշանակած խոչընդութները:

Ցույց տվածը կատարելուց հետո, ձիավորն ուղղվում է դեպի ձիամարզարանի պատը և շարունակում

և շարժումը գետի այն կազմը և այն քելքով, ինչպես
շարժվել և մինչեւ վարժություն կատարելը:

գ) ԴԱՇՏԱՅԻՆ ԶԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

81. Դաշտային ձիավարություն կոչվում է առանց
ձանապարհների վայրում ձիավարությունը:

Դաշտային ձիավարության վարժությունները
բաղկացած են.

- 1) ձիավարությունից հարթ վայրում,
- 2) ձիավարությունից կտրառուկ վայրում, հաղթա-
շարելով բնական խոշնդրությունները,
- 3) ձիավարությունից խրուտ տեղերում,
- 4) ձիավարությունից ավազոտ վայրում,
- 5) ձիավարությունից գուղձավոր վայրում,
- 6) ձիավարությունից թփուփներում և կոտորած
անտառում,
- 7) ձիավարությունից անտառում,
- 8) ձիավարությունից սառցի վրա,
- 9) ձիավարությունից գիշերը:

82. Ձիավորի նստվածքը դաշտում ձիավարության
ժամանակ, այնպես պետք ելինի ինչպես և ձիամար-
դարանում, պետք ելինի պինդ, ճկուն, առանց ճնշելու
ձիու շարժումները և ազատ:

83. Ճանապարհին հանդիպած խոչընդուները հաղ-
թահարվում են համաձայն 72—80 հոդվածների:

84. Ուղղորդ վերելքներում պետք ել ձիու սանձը
թուլացնել, վորպեսզի նա կարողանա ծդել վիզը, բռնել
բաշից, ուժեղացնել հենումը ծնկների վրա, իրանն ա-
ռաջ տալ և սրունքները սեղմելով, կանգնել ասպան-
դակների վրա:

85. Ուղղորդ, կարճ վերելքները և վայրեջքները
պետք ե անցնել ուղղակի:

Վորքան վերելքը ուղղորդ և, այնքան քելքն ավելի
աշխատ պիտի լինի: Վայրեջքները միշտ անցնում են
քայլով:

86. Քարոտ կամ պինդ գետնով ճանապարհները
անցնում են կողնակներով:

87. Խիստ կտրուկ վայրում ձիավարության ժա-
մանակ պետք ե ձիուն հնարավորություն տալ, վոր
ինքն ընտրի ճանապարհը: Ձիավորը, հարմարվելով
ձիու շարժմանը, չպետք ե խանդարի նրան:

88. Վարելահողում ձիավարության ժամանակ գուղ-
ձավոր կամ թփուտներով ծածկված վայրում, արագ
քելքերից պետք ե խուսափել, ձին քչել յերասանակով
և սրունքներով:

89. Խրուտ տեղերում ձիավարության ժամանակ
պետք ե ձին քչել առավելապես քայլով, ընդունելով
այն նստվածքն, ինչ վոր ուղղորդ վերելքը հաղթահա-
րելիս:

90. Սառցի վրա կամ լարձուն գնանի վրա ձիավա-
րության ժամանակ, պետք ե ձին քչել քայլով յերա-
սանակով և սրունքներով խուսափելով կարճ և կրտ-
րուկ պտույտներից:

91. Ընդհանրապես ձիավարության ժամանակ, և
մանավանդ մեծ տարածություններ անցնելիս անհրա-
ժեշտ ե ամենից առաջ հոգալ ձիու ուժերը ինայելու,
վորի համար. ա) տեղից շարժվելիս գնալ քայլով
(մինչև 2 կլմտ.), բ) հետո շարժումը շարունակել փո-
փոխակի քելքով, դ) գաղարքներ անել՝ փոքրը—մինչև
10 ըուպե առաջին 20—30 բոպե շարժումից հետո (թաժ-

քվածքը նայելու և փորքաշները ձգելու համար) . մեծ—անցնելով ճանապարհի կեսից մի քիչ ավելի, դ) 2 ժամ շարժութից հետո, հետագա շարժման յուրաքանչյուր ժամից հետո, ողտակար և 5 րոպե անցնել վոտով, ձիու կապը քաշելով. զ) մեծ դաշտարքից առաջ, նույնպես շարժումն ավարտելուց առաջ, պետք է վերջին 2 կլմ. անցնել վոտով ձիու կապը քաշած :

92. Շարժման հաշվը (չհաշված դաշտարքները) .

ա) մի ժամում 8 կլմ. արագության ժամանակ—10 րոպե քայլով, 5 րոպե վարդով, 10 րոպե քայլով, 5 րոպե վարդով և այլն.

բ) մի ժամում 9 կիլոմետր արագության ժամանակ—10 րոպե քայլով, 10 րոպե վարդով, 10 րոպե քայլով, 10 րոպե վարդով և այլն.

զ) մի ժամում 10 կլմ. արագության ժամանակ—5 րոպե քայլով, 10 րոպե վարդով, 5 րոպե քայլով, 10 րոպե վարդով և այլն:

93. Դաշտային ձիավարության բոլոր վարժությունները վերջացնելուց և յուցացնելուց հետո պետք է կատարել .

ա) ձիավարություն՝ խոչընդոտներ հաղթահարելով հատկապես կահավորված հրապարակներում .

բ) ձիարշակ առաջնորդի յետելից և

զ) դաշտային մրցակցություններ ցատկումների ժեղ:

Ը) ՀՈՒՆՈՎ ԱՆՑՆԵԼԸ

94. Ձիավարության առանձնահատկությունները հումով անցնելու ժամանակ կախված են հունի խորությունից, լայնությունից և ջրի հոսանքի արագություն-

նից : Վարքան հունն առվելի խորն է, այնքան ագելի մեծ ուշադրությամբ պետք է ձին քշել :

Հարկավոր է ասպանդակները ծալել (թամբի վրա գցել) : Յեթե ձին լողում է այն ժամանակ ձիավորը պետք է պատրաստ լինի իշնելու ձիու այն կողմը, վորտեղից հոսանքն է :

թ) ԼՈՂԱԼՈՎ ԱՆՑՆԵԼԸ

95. Զրային արգելքները, վորոնք չի կարելի անցնել հումով, հաղթահարվում են լողալով, հետեւյալ յեղանակներից մեկով .

ա) Լողալով անցնելը թամբած ձիով հագուստն ուղենքերը թամբին կապած : Դրա համար, չուր մտնելուց առաջ, պետք է մերկանալ, հազուստեղենը և սպիտակեղենը պինդ կապոց կապել, վորի մեջ դնել հրապաշտը, հետո կապոցն ամրացնել թամբի առջևի կեղլն . ապա ասպանդակները վեր բարձրացնել ասպանդակների փոկերի վրա թամբի յետեվի կեղին, հոսանքի հակադիր կողմից կապել հրացանը և մի վորք թուլացնել յետի փորքաշը : Դրանից հետո նստել թամբի վրա յերասակները կապ գցել այնպես, վոր ձին կարողանապատ ձգել վիզը, մտնել ջրի մեջ հոսանքի ուղղության ուղիղ անկյունով և յերք վոր ձին կսկսի լողալ, մեկ կամ յերկու ձեռքով բռնել ձիու բաշի վերջին ժամուց յերկու ափաչափ, իշնել թամբից հոսանքի կողմն և լողալ ձիու հետ միասին : Յեթե հարկավոր է ձիու կարելի յեղեկավարել յերասակներով :

Ձիավոր-լողորդի ձեռքերը պետք է մեկնած լինին, իրանը հորիզոնական և մեծ մասով ջրի մեջ մտած :

Հենց վոր ձին վոտերը դնի գետի հատակին, ձիա-
վորն իսկույն և յեթ պետք ե նստի նրա վրա :

բ) Լողալով անցնել թամբած ձիու վրա նստած
լրիվ սպառազինմամբ և առանց մերկանալու : Դրա հա-
մար պետք ե յետին փորքաշն արձակել և ասդանդակ-
ները բարձրացնել դեպի վեր ասպանդակի փոկերի վր-
րա, ձին հեծնել, յերասանակները կապ դցել, մտնել
ջուրը և ձին ուղղելով, թողնել յերասանակները, բըռ-
նել բաշից, վոչ հեռու բաշի վերջին մասից յերկու ա-
փաչափ, հետաղայում դործել այնպես, ինչպես ցույց
և տված ա . կետում :

ԳԼՈՒԽ III

ԶԻԱՎՈՐՆԵՐԻ ԽՄԲԱԿԱՑԻՆ ԶԻԱՎՈՐՈՒ- ԹՅՈՒՆՆԸ

96. Միաձի ուսուցման հաջողության համար,
յերբ ձիավորները մի փոքր կընտելանան սկզբնական
պահանջներին, նրանց պետք ե բաժանել 4—6 մար-
դուց բաղկացած խմբակների, (նայած նրանց նստված-
քի առանձնահատկություններին և սկզբնական դաս-
րնթացի յուրացնելու հաջողությանը) :

97. Ուսուցման ստուգման համար և ձիավարու-
թյանը նայելու ժամանակ խմբերը միանում են և
15—20 ձիուց բաղկացած փոխեր են կազմում :

ա) ԶԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԽՄԲԱԿՈՒՄ

98. «Հեծիր» և «իջիր» հրամանները ձիավորները
կատարում են 2—8 հողվածներում ցույց տված կո-
նոնների համաձայն, ձիերին կանգնեցնելով մեկը մյու-
սից վորոշ հեռավորության վրա կամ փոխերով ձիա-
վարության կանոնների համաձայն :

99. Խմբակով ձիավարության ժամանակ տրվում
են նույն հրամանները, ինչ վոր միաձի ձիավարու-
թյան ժամանակ, ընդ վորում դրանք կատարվում են
բոլոր ձիավորների կողմից միաժամանակ :

100. Ձիավարությունը կարող է լինել.

ա) ամբողջ խմբակով—պոչի վրա, մարժնաժամարդական շարժումները կատարելու համար,

բ) միաձի—դեպի խոչընդոտները կամ մարզարանի ներսում շարքից դուրս կանչված ձիավորի, յեթե մյուս ձիավորները շարժվում են մարզարանի պատերի յերկարությամբ.

գ) առանձին—առանձին—մեկ կամ մի քանի ուղղությամբ ցույց տված կամ կամայական քելքով, հաղթահարելով խոչընդոտները կամ առանց նրան.

դ) Վորոշ հեռակայության վրա—փոխերով ձիավարության կանոնների համաձայն.

է) դաշտում:

բ) ԶԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԻ ՄԵՋ

101. Զին հեծնելուց առաջ ձիավորները կանգնում են մի տողան փակ կամ բաց (ցույց տված միջանցով) շարքում, ձիերը համաձայն հոդ. 1 ցուցումների պահելով:

Ցեթե շարվելու կարգի մասին պատվերներ չեն տված, այն դեպում փոխը միշտ շարքում և փակ շարքով:

102. Փոխի փակ շարքում ձիերը կանգնում են մի գծի վրա, ասպանդակն ասպանդակին կպած, բայց վոչ սեղմված և գլուխները մի կողմ։ Բաց շարքում ձիերը կանգնում են ճիշտ այնպես, ինչպես փակ շարքում, բայց մեկը մյուսից վորոշ հեռավորության (միջանց) վրա։

103. Փոխը հավասարելու համար հրաման և տըրքութ. աջ (ձախ) ՀԱՎԱԾՈՒՐ։ Այդ հրամանով ձիավորները կանգնում են իրենց ձիերի առաջ, յերեսները

դեպի վերջինները և դրուխը դարձնելով ցույց տված թեր կողմը հավասարվում են իրենք, կանգնեցնելով իրենց ձիերն այնպես, վոր նրանք կանգնեն հավասար և բոլոր 4 վոտերի վրա, իսկ առջևի վոտերը լինեն մեկ գծի վրա։

Ցեթե հրամանով հավասարվելու թեր ցույց չի տված, այդ դեպում այսպիսին կատարվում ե միշտ դեպի աջ թեր կողմը։

Ձիավորները պահում են ձիերը յերկու ձեռքով—աջ ձեռքով՝ ձախ յերասանակը, իսկ ձախով յերախանի յերասանակների ծայրերը բռնած—աջը յերախանից 20 սանտիմետրի վրա։ Ճեռքերի դաստակները պետք ե ոճիքի բարձրության վրա լինեն, ազատ բաց թողած։ Արմունկները մարմնին սեղմելու կարիք չկա։

«ԶԳԱՍՏ» հրամանով ձիավորներն ընդունում են սկզբնական դրությունը ձիու ձախ ուսի մոտ, համաձայն 1 հողվածի։

104. Հեծնելու համար հրաման և տրվում ողակներ—ՀԱՎԱԾՈՒՐ։ Նախապատրաստական հրամանով ամբողջ փոխը դարձնում է գլուխները դեպի աջաթեյանի կողմը, վորը գարձնում է գլուխը դեպի ձախ կողմը։ Կատարդական հրամանով աջաթեյանն արտասանում է մեկ և գլուխն ուղիղ պահում։ Հետեյալը, վոր կանգնած ե նրա կողքին, գլուխը գարձնում է դեպի ձախ և ասութ—յերկու, վորից հետո գլուխն արագ գարձնում է և ուղիղ պահում։ Հետեյալն անում է նույնը, ինչ վոր յերկրորդը, ասում է—յերեք։ Հետո հետեյալը նորից ասում է մեկ և այլն։

«ՈՂԱԿՆԵՐ» համբելը վերջացնելուց հետո հրաման տվողը տալիս ե յուրաքանչյուր ողակին յուր հերթա-

կան համարը, սկսած աջաթեյանից (առաջին, յերկրորդ, յերրորդ և այլն) :

105. «ՀԵԾԻՐ» հրամանով—կենտ ողակները դուրս են տանում իրենց ձիերը 5 քայլ դեպի առաջ, իսկ յերկտողանի շարքում, 9 քայլ առաջ. ապա յուրաքանչյուր ողակի յուրաքանչյուր տողանի առաջին և յերրորդ համարներն իրենց ձիերի առաջքները քաշում են մի քայլ իրենց յերկրորդ համարից դեպի դըրսի կողմը և, նայելով ամբողջ փոխի աջաթեյան համարին—միաժամանակ հեծնում են ձիերը և մոտենում են իրենց ողակի յերկրորդ համարին :

106. ՀԱՎՍԱՎՐ հրամանով—զույգ ողակները քըշում, մտնում են իրենց միջանցների մեջ կենտ ողակների արանքներում և հավասարվում են յուրաքանչյուր տողանում (յեթե տողան են) այնպես, վոր յուրաքանչյուր ճիավոր տեսնի յերրորդ մարդու կուրծքը դեպի հավասարման թեկի կողմը, հաշվելով իրեն առաջինը : Զիավորների միջև միջանցները պետք է այնպես լինեն, վոր ամեն մեկն իր ասպանդակով զգա հավասարման թեկի կողմի իր հարկանի ասպանդակը :

107. Իշնելը կատարվում է իջի՞ր,—ՀԱՎՍԱՎՐ և ԶԳԱՎՍ հրամաններով համաձայն 105 հոգվածում բացարկվածի, բայց հակառակ կարգով :

Բաց փոխի ժամանակ ճիավորները հեծնում և իջնում են ամեն մեկն իր տեղում :

108. Փոխը միաշար ձգելու համար հրաման և տրվում աջից (ձախից) միաշար, այսինքն ձիու հեռակայությամբ ՖԵԼՖ—ՄԱՎՇՅ : Վերջին հրամանով թեկի ճիավորը զնում է ցույց տված քելքով դեպի իր առաջը և հասնելով մարզարանի փակողին, յեթե ու-

րիշ հրամանները չեն յեղել, դառնում ե դեպի աջ, յեթե փոխը ձգվել է աջից, և դեպի ձախ, յեթե փոխը ձգվել է ձախից :

Յերկրորդ և յերրորդ համարները, յերբ հրամանով ցույց տված հեռակայությունը բացվում է, դուրս են գալիս կիսադարձ դեպի առաջավոր համարի ծործորակը : Մյուս համարները, յուրաքանչյուր հիշյալ հրամանով հենց վոր հեռակայությունը բացվում է, դառնում են դեպի առաջավոր համարի կողմն և հասնելով այն տեղին, ուր փոխի մեջ կանգնած եր առաջին համարը—դառնում են դեպի փոխի շարժման կողմը, զնալով առջեկից զնացող համարների հետքերով :

109. Հեռակայություն կոչվում է առջեկից զնացող ձիու պոչից մինչև նրա յետեից գնացողի գլուխն յեղած հեռավորությունը :

Ամենահարմար հեռակայությունը—յերկու ձիու յերկարությունն է. այդ ստուգվում է նրանով, վոր ձիավորը, իր ձիու ականջների միջուկ նայելիս պետք է տեսնի առջեռում զնացող ձիու յետին վոտերի կոճի մաղերը :

110. Վորպեսդի փոխը ձգվելու ժամանակ յուրաքանչյուր համար դուրս գա իր տեղի դիմացը, հրաման և տրվում. աջից (ձախից) միաշար այսինքն ձիավակ, իրենց տեղերի դիմաց, ՔԵԼՖ—ՄԱՎՇՅ :

Վերջին հրամանով, ցույց տված հեռակայությունը բացվելուն պես, յուրաքանչյուր համար դուրս է դալիս հրամայված քելքով ուղիղ իր առաջը

և ժարզաբանի պատին հասնելով դարձնում ե ձին դեպի առաջավոր համարի շարժման կողմը:

111. **Փոխի մեջ ձիավարության ժամանակ պետք ե ճիշտ կերպով պահել հրամայված քելքը և ցույց աված հեռակայությունը:**

112. **Փոխով ձիավարության ժամանակ տրվում են նույն հրամանները, ինչ վոր միաձի ձիավարության ժամանակ, միայն կանդնեցնելու ԿԱՆԴԱՌԻ հրամանից առաջ տրվում ե նախապատրաստական փոխ հրամանը:**

Փոխին տված բոլոր հրամանները պետք ե կատարեն կատարողական հրամանով բոլոր ձիավորները միաժամանակ:

113. **Պտույտներ և դեպի յետ դարձումներ կատարելու ժամանակ, յուրաքանչյուր ձիավոր միշտ հավասարվում ե դեպի առաջավոր համարի կողմը:**

114. **Այն դեպքերում, յերբ անհրաժեշտ ե վոր փոխի բոլոր ձիավորները հերթով կատարեն հրամայված վարժությունն այն տեղում, վորտեղ անում ե առաջավոր համարը, վարժությունը ցույց տվող հրամանից առաջ պետք ե ավելացնել հետեւյալ բառերը. ըստ առաջավոր համարի:**

115. **Ուղղության փոխելն և թեր շրջումը ձգված փոխում միշտ կատարվում ե ըստ առաջավոր համարի:**

116. **Փոխը դեպի պոչը փակելու համար հրաման ե տրվում դեպի պոչը փակվիր—ՄԱՐՌ: Կատարողական հրամանով բոլոր ձիավորները, բացի առաջավորից, կրկնակի քելքով մոտենում են առջենում գնացուին մի քայլ հեռավորությամբ և հետո անցնում են դեպի առաջավոր համարի կողմը:**

դին մի քայլ հեռավորությամբ և հետո անցնում են նախկին քելքին:

117. **Դեպի պոչը փակված փոխը այս կամ այն հեռակայությամբ բաց անելու համար հրաման ե տըրպում. ըստ առաջավոր համարի պյախան ձիու հեռակայությամբ, քելք—ՄԱՐՌ:**

ՄԱՐՌ հրամանով, առաջավոր համարը տեղից գընում ե քայլով, իսկ շարժման միջոցին, յեթե քելքը ցույց չի տված, կրկնակի քելքով. հեռակայության բացվելուն պես մյուս բոլոր պետք ե հետևեն նրան նույնպիսի քելքով:

118. **Առանձին ձիավորներին կամ խմբերից մեկին փոխից դուրս կանչելու համար, պտույտով ձիավարության համար հրաման ե տրվում. այսինչ խմբակ կամ այսինչ ձիավորներ պտույտի համար այսինչ տեղ—ՄԱՐՌ: ՄԱՐՌ հրամանով ցույց տված խմբակը կամ ձիավորները փոխի համարների կարգով դուրս են դալիս մարզարանի ցույց տված մասը և պտույտ են անում միենալուն քելքով և դեպի միենալուն կողմը:**

Փոխը կազմելու համար հրաման ե տրվում. տեղերդ քելք—ՄԱՐՌ: Այս հրամանով պտույտի մեջ յեղածները բոլորը կարճ ճանապարհով գնում են փոխի մեջ իրենց տեղերը:

119. **Փոխով կամ նրա մի մասով խոչընդուների վրայով ձիավարության համար հրաման ե տրվում. ըստ առաջավոր համարի (փոխի մի մասով կամ վորոշ համարը) դեպի այսինչ խոչընդուները քելք—ՄԱՐՌ: ՄԱՐՌ հրամանով ցույց տված համարները դուրս են դալիս և բոլոր յեղած խոչընդուներն անցնելով կարճ ճանապարհով մոտենում են փոխի մեջ:**

120. Զատ-զատ—ՄԱՌՇ հրամանով փոխի բոլոր ձիավորները գնում են կամայական ուղղությամբ միհնույն քելքով, վորով գնում եր փոխը:

Միմիանց հանդիսելու ժամանակ ձիավորները պետք ե գնան ձախ կողմից, հանդիպողին թողնելով աչ կողմից անցնելու:

Զատ-զատ ձիավարության ժամանակ կամայական ուղղությամբ և կամայական քելքով—կանդառումները և քայլով ձիավարությունը թույլատրվում ե միայն մարզարանի մեջ տեղում, վորակեսի դրանով չխանդարեն այլ քելքով գնացողներին:

121. Զատ-զատ, դեպի աջ (դեպի ձախ) ձիավարությամբ մելք—ՄԱՐՇ հրամանով, ձիավորները ցրվում են և գնում ցույց տված ուղղությամբ, առանց հեռակայություններ պահպանելու և վոչ ել ծործորակի ուղղությամբ:

122. Աջից (ձախից) միաշար ձգված փոխը մարդարանի վորեւ պատին զուգահեռ շարելու համար հրաման է տրվում. առաջալոր համար ձախ (աջ) քելքի առաջ, փոխ ձախ (աջ) շարվի՛ր—ՄԱՌՇ:

«Մարշ» հրամանով առաջավոր համարը դառնում է գեպի ցույց տված կողմը, շարժումը շարունակելով նույն քելքով. և առաջալոր համար—ԿԱՆԴԱՌԻ հրամանով—կանդնում ե. մյուս բոլոր համարները շարունակում են շարժումը մարզարանի պատի յերկանությամբ նույն քելքով և մտնելով իրենց տեղերը, քըում են այն քելքով, վորով գնում ե առաջավոր համարը:

123. Փոխը կարող է շարվել նաև բաց դրա հա-

մար հրաման է տրվում. առաջալոր համար, ձախ (աջ) քելքն առաջ, փոխ աջ (ձախ) շարվիր, միջանց այսքան քայլ—ՄԱՌՇ: Հրամանի կատարումը տեղի յեւնենում նախորդ հոդվածի համեմատ:

124. Փոխն առաջավոր համարի շարժման կողմը շարելու համար հրաման է տրվում. առաջալոր համար—ԿԱՆԴԱՌԻ ԱՌԻ: Փոխ աջ (ձախ) շարվիր—ՄԱՌՇ:

«Կանգառ» հրամանով առաջավոր համարը կանգնում է, մյուս համարները շարունակում են շարժումը նախկին քելքով և կարճ ճանապարհով մտնում իրենց տեղերը:

125. Փոխը շարժման ժամանակ շարելու համար հրաման է տրվում. փոխ շարվիր աջ (ձախ)—ՄԱՌՇ: Այս հրամանով առաջավոր համարը շարունակում է շարժումը նախկին քելքով, մյուսները գնում են կրկնակի քելքով, մոտենալով առջևում գնացող ձիավորի ձիու պոչին, քիչ նվազեցնում են քելքը և մտնելով իրենց տեղերը, քըում են այն քելքով, վորով գնում ե առաջավոր համարը:

126. Փակ շարքում ձիավարության պատրաստվելու համար, ոգտակար է փոխով ձիավարության ժամանակ, վարժեցնել շարած փոխով (նախապես հաշվելով յերեք-յերեք) շարժումներ և շարվածքներ կատարելով դասակի ուսուցման համար տված ցուցումների համեմատ:

127. Զորատեսական ձիավարության միջոցին պետի մոտից առաջին անգամին անցնելիս, յուրաքանչյուր ձիավոր, պետին չհասած, յերեք քայլի վրա դլուխը դարձնում ե նրա կողմը, իսկ պետի մոտից անցնելուց հետո դլուխը պահպան է ուղարկում է նրա կողմը, իսկ պետի մոտից անցնելուց հետո դլուխը պահպան է ուղարկում է ուղիղ:

գ) հՈՉԸՆԴԱՑՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ

128. Խոչընդոտների հաղթահարումը կատարվում է
II գլխում (Հոդ. 72-80) բացատրված կանոնների հա-
մաձայն :

դ) ԶԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՇՏՈՒՄ/

129. Զիավարությունը գաշտում կատարվում է II
գլխում (Հոդ. 81-93) բացատրված կանոնների համա-
ձայն : Խմբական ձիավարության ժամանակ անհրաժեշտ
է, վոր յուրաքանչյուր ձիավոր չարժի ինքնուրույն
կերպով, իրեն համար ճանապարհ ընտրելով և խոչըն-
դոտները հաղթահարելով անկախ մյուս ձիավորից,
բայց այն հաշվով վոր առջնում զնացողին շխանդա-
րի : Բացի դրանից, անհրաժեշտ է խմբակը զանազան
շարքերով տանել, սովորեցնելով ձիավորներին ուշա-
դիր լինել հրամատարի նշաններին և հրամաններին :

Գ. Լ. Ռ. Խ. IV

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԶԻՈՒ ՎՐԱ

130. Մարմնամարզական վարժությունները ձիու
վրա նպատակ ունեն մշակելու ձիավորի մարմնի մաս-
ուերի շարժումների ճկունություն, զարդացնել նրա
մկաններն և ամրացնել նստվածքը :

131. Զիու վրա մարմնամարզական վարժություն-
ների կատարման ժամանակ տրվում են նույնական հրա-
մաններ, ինչ վոր դեանի վրա մարմնամարզական վար-
ժություններ կատարելու համար : Վարժությունների
կատարումն սկսելու համար հրաման և տրվում . ԷՍ-
ԿՍԻՌ, գերծացնելու համար ԶԳԱՌԾ :

132. Վարժությունները կատարվում են . ա) Գլխի
համար . գլխի աջ և ձախ դարձում . գլխի առաջ և յետ
ու աջ ու ձախ կուցում շրջանաձև և գլխի շարժում
ձախից աջ և ընդհակառակը :

բ) Իրանի համար . իրանի կուցնելը դեպի առաջ ու
յետ, իրանի աջ ու ձախ դարձում և իրանի շրջանաձև
շարժում աջից ձախ և ընդհակառակը :

շ) Ջեռֆերի համար . շրջանաձև պտույտ ձեռքերով
առաջից դեպի յետ և յետնից դեպի առաջ, միաժամա-
նակ յերկու ձեռքերով կամ փոփոխակի աջով և ձախով,
ձեռքերի նետում դեպի առաջ, կողքերը, վերև ու ներ-
քև, առաջ մեկնած ձեռքերի բաժանում և միացում :

դ) Վատֆերի համար . յերկու ծնկների վեր բարձ-
րացում, յերկու սունքներով որորում միաժամանակ

կամ փոփոխակի՝ աջով և ձախով, իրանի բարձրացում ծնկների վրա և սահուն իջեցում, վոտի թաթը պտտելը դեպի աջ ու ձախ կողմերը, վերև և ներքև :

133. Հիշատակված բոլոր մարմնամարզական վարժությունները կատարելու ժամանակ (բացի յերկու ծնկների վերև բարձրացնելուց և իրանը ծնկների վրա բարձրացնելուց) — ձիավորի մարմնի դրությունը գոտկատեղից մինչև ծնկները չպետք է փոխվի:

134. Այս վարժությունների կատարման ժամանակ, վորոնց չեն մասնակցում ձեռքերը, նրանց դրությունը նախապես պետք է վզրոշվի համապատասխան հրամանով, հակառակ դեպքում ձեռքերը մնում են յերաստնակները յերկու ձեռքերում պահելու դրության մեջ:

135. Յեթե վարժությունները կատարվում են բաժնակի կերպով, այդ դեպքում «ՍԿՄԻՌ», հրամանից առաջ պետք է ավելացնել «բաժնակի» և վորից հետո հրաման և տրվում «ԱՐԱ ՄԵԿ», «ԱՐԱ ՅԵՐԿՈՒ» և այլն, դրանց համեմատ կատարվում են վարժությունների համապատասխան նվազները:

Վարժությունները պետք են կատարել արագ և աշխույժ կերպով:

Վարժության առանձին նվազների միջև պետք է խուսափել տևական ընդմիջումներից, վորոնք ձիավորներին ավելորդ հողնածություն են պատճառում:

136. Ձեռքերի, վոտքերի, իրանի և գլխի մարմնամարզական վարժությունները կարելի յեն կատարել միաժամանակ, վորի համար և տրվում է համապատասխան հրաման որինակ. գլխի առաջ ու յետ կռացում, ձեռքերը նետելով դեպի առաջ, կողքերը, վերև ու ներքև — ՍԿՄԻՌ:

137. Մարմնամարզական վարժություններով պարագմունքների ժամանակ անհրաժեշտ է ըստ հնարավորին համախ փոխել ձիավորների տակի ձիերը, վորպեսզի նրանք չընտելանան միևնույն ձիու առանձնահատկություններին:

138. Մարմնամարզական վարժությունները կարելի յեն կատարել թե՛ տեղում և թե՛ շարժման միջոցին, բայց միշտ բաց թողած յերաստնակներով և ասպանդակներով:

139. Շարժման ժամանակ մարմնամարզական վարժություններ կատարելիս փոխը փակվում է դեպի պոչը և կապ գցած յերաստնակները գցում են ձիու վզի վրա : Առաջավոր համարը յերաստնակները բաց չի թողնում, փարժություններ չի կատարում և հետևում է միայն քելքի հավասար տեմպին (թափին), վոր ցույց է տրված սոլորեցնողի հրամանով : Առաջավոր համարը, յեթե նա հին ծառայող կարմիր բանակայիններից չէ, հարկավոր է ժամանակ փոխել:

Գ Լ Ո Ւ Խ Վ

ԶԻԱԽԱՂԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱՅՏԵ ԶԻՈՒ ՎՐԱ

140. Փայտե ձին պետք է կենդանի ձիու ձև ունենա. բաշը պատրաստում են պարանի փնջերից կամ մի վորուկ այլ նյութից :

Զիու բարձրությունը և յերկարությունը 150-ից մինչեւ 180 սանտիմ ե:

Զիախաղացության նախնական պարագծունքների համար փայտե ձին թամքում են ձիախաղացական թամքով :

Ցածում թված բոլոր վարժությունները կատարվում են կամրջակից (տրամպլին) կամ առանց նրան : Սկզբում ձիու ձախ կողմից, իսկ հետո աջ կողմից :


ա) ՑԱՏԿՈՒՄՆԵՐ ԶԻՈՒ ՎՐԱ

141. Զիու վրա ցատկումները կատարվում են .


- 1) Կողքից .
- 2) Վզի դիմացի կողքից և
- 3) Թափով :

1) Ցատկում քամբի վրա կողքից .


Կանգնել կամրջակի վրա ձախ (աջ) կողմից, ձիուց կես քայլի վրա յերեսը դեպի ձին. մի ձեռքով բռնել բաշից վզի մեջ տեղում, իսկ մյուսը դնել թամքի վրա բաշի վերջին մասին մոտիկ. մի քիչ ծնկները ծալել և




Նկ. 13.



Նկ. 14.



Նկ. 15.



Նկ. 16.

յերկու վոտքով միանգամից ցատկելով ձգել ուղիղ ձեռքերի վրա, ապա տեղափոխել աջ (ձախ) վոտը գտվակի վրայով և սահուն կերպով նստել թամբի մեջ, յերեսը դեպի ձիու վիզը (նկ. 13, 14, 15):

2) Ցատկում կողմից վզի դիմաց

Կանգնել ձիու ձախ կողմում, ձախ ուսով դեպի ձիու վիզը, ձախ ձեռքով բաշից բռնելով թռչել կամրջակի վրա դուրս հանելով ձախ վոտը և ցատկելով կամրջակից յերկու վոտով, ցատկում դործել թամբի մեջ, ոգնելով իրեն աջ ձեռքով, վորը պետք և տափակ դնել առջեկի կեղի վրա, բաշի վերջին մասին մոտ (նկ. 16, 14 և 15):

3) Ցատկում թափով

Կանգնել մեջքը դեպի ձին նրա վզին մոտիկ, վոտերը միատեղ, ձեռքով բռնել բաշից ձիու վզի մեջտեղում. մի քայլ անել կամրջակի վրա, ցատկել որանից յերկու վոտով և միենույն ժամանակ մի ձեռքով ձգել բաշից, իսկ մյուսով հենվել առաջին կեղի վրա. աջ (ձախ) վոտը տանել գավակի վրայով և սահուն կերպով իջնել թամբի մեջ (նկ. 17 և 18):


բ) ԶԻՈՒՑ ՎԱՐ ՑԱՏԿԵԼԸ

142. Զիուց վար ցատկելը կատարվում է.


- 1) Վոտը նրա վզի վրայով տեղափոխելով,
- 2) Վոտը նրա գավակի վրայով տեղափոխելով և
- 3) Նրա գավակի վրայով:

1) Վար ցատկելը վոտը նրա վզի վրայով տեղափոխելով.

Զախ (աջ) ձեռքով պահելով թամբի ձախ (աջ) կանթից, տեղափոխել ուղիղ պահած աջ (ձախ) վոտը



Նկ. 17.



Նկ. 18.

ձիու վզի վրայով և ցած թռչել ձախ (աջ) կողմից յերեսը դեպի ձիու գլուխը, վոտերը կիսատ ծալած և աջ (ձախ) ձեռքով թամբի առջևի մասից բռնած :

2) Զիուց վար ցատկելը վոտը գավակի վրայով տեղափոխելով .

Բանելով թամբի կանթերից, հենվել նրանց վրա յերկու ձեռքով, դուրս նետել ուղիղ պահած վոտերը դեպի յետ և վերև (ձիու մեջքին զուգահեռ), հետո տանել աջ (ձախ) վոտը գավակի վրայով, ցատկել դետնի վրա ծնկները կիսատ ծալած և աջ (ձախ) ձեռքով թամբի առաջի մասից բռնած :

3) Զիուց վար ցատկելը գավակի վրայով .

Նստել թամբի մեջ յերեսը դեպի գավակը, յերկու ձեռքը գավակին դնելով, ցատկել ցած ձիու գավակի վրայով կես պազելով :

143. Մկրտառ . բռնել թամբի կանթից յերկու ձեռքով, վոտերը նետել դեպի յետ և հենվելով թամբի կանթերին յերկու ձեռքով, աճուկից սկսած ուղիղ պահած վոտերը վեր բարձրացնել . այն բոսկելին, յերբ յերկու վոտն ել ողի մեջ կլինեն, գոտկատեղից ցածը շուռ տալ, վոտերն ողի մեջ խաչելով, նստել թամբի մեջ յերեսը դեպի գավակը, շուռ գալու բոսկելին բաց թողնել թամբի կանթերը :

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՆԴՐԱՆԻ ԶԻՌԻ ՎՐԱ.


144. Զիախաղացության համար պետք ե ընտրել ուժեղ ձի, վոչ խուստուտական համաշափ շարժվող և սանձապարանով շարժմանը վարժված :

145. Զին կառավարելու համար պետք ե յերկու հոգի լինեն՝ մեկ սանձապարանը բռնող և մյուսը մըտ-

բակով. ձին դաւրս է բերվում սանձած և թամբած շարային կամ ձիախաղացական թամբով:

Յերասանակները քցում են ձիու վզի վրա, կապ են դցում և աղատ թողնում ձիու վղին: Յերախճանի ձախ (աջ) ողակից կապում են սանձապարանը կապի մեջ առնելով նաև շրթնափոկը՝ «Հեծելազորի շարային ձիու վարժեցման հրահանգի» ցուցմունքների համաձայն:


146. Ձիու վրա ցատկելն և վար թռչելը, յերբ նա կանգնած է տեղում, կատարվում է նույն վարժու-




Նկ. 19.

թյունների կանոններով, ինչ վոր փայտե ձիու վրա, բայց առանց կամրջակի: Ձիախաղացությունը պտույտի ժամանակ կատարվում է վարդով և արշավով:

147. Վարդով ձիախաղացության ժամանակ պետք է վազել շրջանի ներսի կողմից, թաթերի ծայրերի վրա և



Նկ. 20.




Նկ. 21.

ծիու հետ համաքայլ, վոտերն իրանից առաջ ձիու առջե-
մի վոտերից կես քայլի վրա, թամբի կանթերը յերկու
բռան մեջ առած պահել (նկ. 19) :

148. Արշավով ձիախաղության ժամանակ դեկա-
վարվել նույն կանոններով մարմնի և ձեռքերի դրու-
թյան համար, բայց պետք է վազել վոստյուններով ձիու
արշավի տեմպով և նրա հետ համաքայլ :

149. Ձիու վրա ցատկելու համար պետք է վարդի
միջոցին վազել մի քանի քայլ, իսկ արշավի ժամանակ
մի քանի վոստյուն անել, վորից հետո ձիու ներսի վոտի
տեմպի հետ յերկու վոտերը գետնից կտրել, ձգվել ու-
ղիղ պահած ձեռքերի վրա, դրա հետ միաժամանակ վո-
տը տեղափոխել ձիու գավակի վրայով և սահուն իջնել
թամբի մեջ, սեղմելով թամբը վոտերով (նկ. 20 և 21) :



Նկ. 22

150. Ձիուց վար ցատկելու համար, վոտը վզի վրա-
յով տեղափոխելով, պետք է բռնել ներսի կողմի ձեռքով
ներսի առաջի կանթից, իսկ գրսինով գրսի յետեի կան-
թից և ուղիղ պահած վոտը բարձրացնելով, ըստ հնա-
րավորին բարձրից տեղափոխել այն ձիու վզի վրայով
(նկ. 22) : Դրանից հետո բռնել դրսի ձեռքով թամբի
դրսի առաջի կանթից, ապա ներսի ձեռքով բաց թողնե-
լով և նորից բռնելով թամբի կանթից (վոտի վրայով),
ցատկել գետնի վրա չկաչելով ձիու կողքին, վոտերի
թաթերի ծայրերի վրա, ձիու ներսի ուսի դիմաց, նրա-
նից հեռու, պառույտի ներսում :

Պետք է վար ցատկել այն հաշվով, վոր վոտերը
կազեն գետնին այն ըստելին, յերբ ձին գետնին և դնում
իր ներսի առջեվի վոտը :

151. Ձիուց վար ցատկելու համար, վոտը գավակի
վրայով տեղափոխելով, պետք է բռնել յերկու ձեռքով
առջեկի կանթերից և իրանն ուղիղ ձեռքերի վրա հենե-
լով, հղել այն գեպի առաջ և ներս, միենույն ժամանակ
դրսի վոտը, աղդը ից ցած՝ ուղիղ պահելով, տանել ըստ
հարավորության բարձր ձիու գավակի վրայով և ա-
ռանց կանդ առնելու վար ցատկել գետնի վրա, ինչպես
շուց և տված վերևում :

152. Ձիուց վար ցատկելը գավակի վրայով կա-
տարկում և այն կանոններով, վոր բացատրված են
Հոդ. 142-ում :

153. Ձիուց վար ցատկելուց հետո կարելի յե նորից
ձիու վրա ցատկել միենույն տեմպով կամ մի քանի քայլ
վազելուց հետո :

Վորպեսպի ձիուց վար ցատկելուց հետո, կրկին մեկ
նվազ նրա վրա ցատկել, պետք և թամբից իջնելով,

վոտքերը գեսանից կարել ինչպես ցույց և տված հող .
149-ում և նստել թամբի մեջ :

154. Յերկու վոտով թամբի դրսի կողմի վրա նըս-
տելու , համար պետք ե գետնին զարկ տալուց հետո , վո-
տերի ազդըներով պտույտ անել դեպի դրսի կողմը , տե-
ղափոխել նրանց գավակի վրայով և նստել թամբի մեջ
կիսադարձ , ձեռքով թամբի ներսի կանթից բռնած :

Այդ դրությունից թամբի մեջ նստելու համար ,
պետք ե շարժման թափի (տեմպ) հետ միասին բռնել
դրսի ձեռքով թամբի կանթից , իրանը տալ դեպ առաջ և
դեպի պտույտի ներսը , վոտերն ազդրից ցած ուղիղ
պահած դեպի յետ և վեր տանել , մի վոտը տեղափոխել
ձիու գավակի վրայով և սահուն կերպով նստել թամբի
մեջ :


155. «Մկրատ» անելու համար պետք ե յերկու ձեռ-
քով բռնել առջեվի կանթերից , իրանն առաջ տալով հեն-
վել ուղիղ ձեռքերի վրա , թեքել այն դեպի պտույտի
ներսի կողմը և միաժամանակ շարժելով վոտերն ազդըն-
ներում , նետել դեպի յետև վերև (ծնկներն ուղիղ) ձիու
շարժման թափի (տեմպի) համեմատ և ողի մեջ վոտերը
խաչելով , բաց թողնել թամբի կանթերը , նստել յերեսը
դեպի գավակը (իրանը պահել ուղիղ) :

Նորից յերեսով դեպի ձիու գլխի կողմը նստելու
համար պետք ե բռնել յետեի կանթերից ձեռքերով ,
յեղունգները դեպի ցած) իրանը հենել ձեռքերի վրա , վո-
տերը վեր բարձրացնել և ողի մեջ նրանց խաչելով , նըս-
տել յերեսը դեպի ձիու գլուխը :


156. Շարային թամբի վրա ձիախաղացության ժա-
մանակ կատարվում են նույն վարժությունները , ինչ
վոր ձիախաղացական թամբի վրա , միայն ներսի ձիու-

քով պետք է բռնել բաշից վզի մեջ տեղում , իսկ դրսի-
նով առջեկի կեղծից :


157. Զիախաղացությունը շարային թամբի վրա
լիվ բերով կատարվում և միւնույն կանոններով , բայց
թույլատվում և միայն ձիու վրա թոշելու և վար ցատ-
կելու վարժությունները ձիու ձախ կողմից (նկ . նկ . 23 ,



Նկ . 23 .



Նկ. 24.




Նկ. 25.

ԳԼՈՒԽ VI

ԴՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՐԱԶԻՆՈՎ

1. ԹՈՒՐ.



Շեղբ

- ա) Շեղբ
- բ) Ցերախակալ
- գ) Սուր ծայր
- դ) Մարտական ծայր
- ե) Միջին մաս
- ե) Ցերախակալի բռնատեղ
- ը) Ցերախակալի գլուխը
- թ) Անցք սրետիքի համար
- ա) կոճակ, բ) բերան, հ. կ. հարվածի կենտրոն

ա) ԶԵՎԵՐ ԹՐՈՎ

158. Հեծյալ շարքում շեղբերը պատժաններից հանում են թուրք և ՄԱՐՏ, հրամանով։

Այդ կատարվում է յերեք նվագ ընդ վորում առաջին նվագը կատարվում է «թուրք» նախազարդարաւո-

կան հրամանով, իսկ մնացածները՝ ի ՄԱՐՏ կատարու-
ղական հրամանով:

Առաջին նվագ—աջ ձեռքն արագ կերպով անցկացնել
ձախ արմունկի և ձախ աճուկի արանքով յերախակալի
ուղղությամբ ապա աջ ձեռքի դաստակը մտցնել սրետի-
քի ողակի մեջ, բռնել յերախակալի կոթից բոլոր մատ-
ներով ընդդրկած և դուրս քաշել շեղը ձեռքի ափի
լայնությամբ (նկ. 26):



Նկ. 26

Յերկրորդ նվագ—դուրս քաշել շեղը պատյանից և
սուր ծայրը բարձրացնել վերև աջ ձեռքն ամբողջովին
մեկնած, բերանը դեպի ձախ (նկ. 27):

Յերրորդ նվագ—իջեցնել շեղը բռնած ձեռքը դեպի

յած, դնել շեղը կռնակի կողմով աջ ուսի փոսի մեջ.
աջ ձեռքի դաստակը դնել ձախի դաստակի վրա: Զոր-
րորդ և անանուն մատերը պահել ըստ ցանկության, ոգ-
նելով նրանցով ձախ ձեռքին ձիուն կառավարելու գոր-



Նկ. 27

Ժում: Շեղը պահվում է յերախակալից բռնած ցուցա-
մատով և միջին մատով առջևի կողմից և բութ մատով
յետեկի կողմից. շեղի ծայրն ուսից յած չթողնել
(նկ. 28):


159. Շեղբերը պատյան են գրվում թղթին, ի ՊԱՏՅԱՆ հրամանով :

Այդ հրամանը կատարվում է յերեք նվագ :

Առաջին նվագ—աջ ձեռքով բռնել բռնատեղը և շեղբը բարձրացնել սուր ծայրը դեպի վեր, իսկ բերանը դեպի ձախ ամբողջովին մեկնած ձեռքով (նկ. 27) :

Յերկրորդ նվագ—չուռ տալ ձեռքի դաստակն այնպես, վոր շեղբի սուր ծայրն իջնի ցած (բերանը դեպի իրեն) ձախ ձեռքի արմունկի և ձախ աճուրկի արանքով և դնելով սուր ծայրը պատյանի բացվածքի մեջ, աջ ձեռքի դաստակը պահել ոճիքի բարձրության վրա, իսկ ձախ արմունկը մի քիչ բարձրացնել (նկ. 29) :

Յերրորդ նվագ—դնել շեղբը պատյանի մեջ, աջ ձեռքն ազատել սրետիքից և դնել ձախ ձեռքի դաստակի վրա :



ՊԱՏՅԱՆ

Ք. Պատյան

ա— Ցածի ծայրապանակ

բ— Ցածի ամրացնող ող

գ— Միջին ող սվինի բնով և համերձանքի փոկի համար ողակով :

դ—Վերևի ամրացնող ող սվինի բնով :

զ—Վերևի ծայրապանակ համերձանքի փոկի համար ունկով :

160. Պետին դիմավորելու համար (նրա մոտով անցնելուց առաջ և հման այլ դեպքերում) հրաման և տըր-



Նկ. 28.




Նկ. 29.

վուամ քուրն ի մարտ, նիդակը ԶԵՌԻԲԻՇԻ, այդ Հրաման-
նով շեղբերը դուրս են հանում ճիշտ այնպես, ինչպես
նկարագրված ե վերևում:

161. Պետին դիմավորելու համար, յերբ շեղբերը
հանված են պատյաններից, զորամասի հրամատարական
կազմը, դասակների հրամատարներից սկսած և վեր,
վողջունում են. ԸՆԿԵՇԻ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐ հրամանով:

Վողջունը կատարվում է յերկու նվազ.




Նկ. 30

Առաջին նվազ—բռնելով շեղբի յերախակալն աջ ձեռ-
քի ամրող դաստակով և դնելով բութ մատը բռնատեղի
ճախ (դեպի իրեն ուղղված) կողմի յերկարությամբ,

չեղբը բարձրացնել մինչև ոճիքն այնպես, վոր գաստա-
կը լինի ոճիքի բարձրության վրա և տասը սանտիմետր
նրանից դեպի առաջ, իսկ շեղբի բերանը դարձած լինի
դեպի ճախ կողմը, սուր ծայրը դեպի վեր և մի քիչ յետ:
Շեղբի այդ տեսակ դրությունը կոչվում է թուրը
«այրնիվեր» բռնել (Նկ. 30):

Յերկրորդ՝ նվազ—շեղբը մի քիչ «այրնիվեր» գլո-
ւությամբ պահելուց հետո, իջնել դեպի ցած, բերա-
նը գեպի ձին. աջ ձեռքն ու շեղբն այդ դեպքում պետք
է աղատ կերպով կախ քցած լինեն (Նկ. 31):



Նկ. 31

Հրամատարական կազմի թրերն ի մարտ վերցնելու
համար նորից հրաման ե տրվում. ԸՆԿԵՇԻ ՀՐԱՄԱՏԱՐ-
ՆԵՐ, վորը կատարվում ե բացատրվածի համեմատ,
բայց հակառակ կարգով:

162. Պետի մոտով հանդիսավոր զորանցով անցնե-
լու ժամանակ. վողջունում են բոլոր հրամատարները,

գառակի հրտմատարից սկսած և բարձր, հետեւալ կանոններով։ պետին 10 մետր չհասած կատարվում է «սայընիվեր» ձեի առաջին նվազը, յերեք մետր չհասած յերկրորդ նվազը և պետի մոտով յերեք մետր անցնելուց հետո թուրը յերկու նվազ վերցնում են «սայընիվեր» և ի մարտ։ Զորամասի հրամատարն ավագ պետին զիկուցելու ժամանակ վողջունում ենույն յեղանակով։

բ) ԽԻԹԵՐ, ՀԱՐՎԱԾՆԵՐ ՈՒ ՎԱՆՈՒՄՆԵՐ :

163. Շեղով խիթելը, հարվածներն ու յետմղումները կատարվում են «թուրն ի մարտ» գրությունից։

164. Խիթերի, հարվածների և յետ մղումների ժամանակ ծնկները պետք ե ավելի պինդ սեղմել թամբին, իսկ իրանը պետք ե զարձնել ու թեքել դեպի խիթի կամ հարվածի կողմը, հենվելով համապատասխան առպանդակի վրա, նպաստել նրանց։

165. Խիթեր հասցնում են թե տեղում և թե շարժման ժամանակ. դեպի ձախ, կես դարձ դեպի ձախ, և կես դարձ դեպի աջ։

Տեղում խիթեր հասցնելու համար հրաման և տըրգում. ձախ (կես դարձ ձախ, կես դարձ աջ)՝ ԾԱԿԻՌ։

166. Ձախ (կես դարձ ձախ, կես դարձ աջ)՝ ԾԱԿԻՌ, հրամանը կատարվում է յերկու նվազ։

Առաջին նվազ՝ «ձախ (կես դարձ ձախ, կես դարձ աջ)» նախապատրաստական հրամանով պետք ե շեղբի յերախակալը բռնել չորս մատով ընդդրկած, բռւթ մատը մեկնել նրա կոնակի յերկարությամբ առա աջ ձեռքի գաստակը շեղբը բռնած բարձրացնել դեպի աջ ականջն այնպես, վոր շեղբի բերանը դարձրած լինի դեպի աջ։

իսկ սուբ ծայրը լինի յերախակալի բարձրության վրա և այն ուղղությամբ, ուր պետք ե խիթ հասցնել (նկ. 32)։


Յերկրորդ նվազ՝ «Ծակիր» կատարողական հրամանով արագ դաւանալով և իրանը թեքելով դեպի խիթի կողմը, ձեռքի ուժեղ շարժումով խիթ հասցնել, դրա հետ միաժամանակ ամբողջ իրանը դեպի խիթի կողմը




Նկ. 32.

թեքելով. դրանից հետո արագ կերպով շեղբը յետ քաշել դեպի աջ ականջը և շեղբը պահել «քուրն ի մարտ» գրությամբ (նկ. 33)։

167. Շարժման միջոցին խիթ հասցնելու համար պետք է վարվել այնպես, ինչպես ցույց ե տրված հոդանում, բայց աջ ձեռքը շեղբը բռնած մեկնել դեպի առաջ ամբողջ ձեռքի յերկարությամբ, առանց ականջն այնպես, վոր շեղբի բերանը դարձրած լինի դեպի աջ։



Նկ. 33.



Նկ. 34.

մոտեցնելու, և շեղբի սուր ծայրով նշան բռնել հակառակորդին, նրան հարվածելու համար ոգտվել ձիու շարժման ուժից (նկ. 34) :

168. Շեղբով հարվածներ հասցնել կարելի յեղապի աջ, դեպի ցած աջ և դեպի ցած ձախ:

Հարվածներ հասցնելու համար հրաման և տրվում աջ (ցած աջ, ցած ձախ), ցած ձախ—ՀԱՏԻՌ :




Նկ. 35.

169. «Աջ հատիր» հրամանը կատարվում է յերկու նվազ:

Առաջին նվազ—«աջ» նախապատրաստական հրամանով բռնել շեղբի յերախակալը բոլոր մատերով ընդդրկած և աջ ձեռքի դաստակը շեղբը բռնած արագ տառել դեպի ձախ ուսն այնպես, վոր շեղբի բերանն (ուղղված լինի դեպի առաջ, իսկ սուր ծայրը, մի քիչ դեպի

յետ, և յերաժիշտակալի հետ մինչև ուշին բարձրության վրա լինի (նկ. 35):

Յերկրորդ նվազ—«Հատիր» կատարողական հրամանով ձեռքի արագ և ուժեղ շարժումով, ու միաժամանակ իրանը դեպի հարվածի կողմը դարձնելով ու թեքելով՝ հարված հասցնել, ուսի բարձրությամբ ձախից աջ (նկ. 36): Նպատակը հարվածելուց հետո շեղը պահել «թուրն ի մարտ» դրությամբ:



Նկ. 36.

Հասցրած հարվածը լինում է կտրող շեղը դեպի իրեն յիտ քաշելով:

170. «Ցած աջ—Հատիր» հրամանը կատարվում է յերկու նվազ:

Առաջին նվազ—նախապատրաստական «ցած աջ» հրամանով պետք է ձեռքը շեղը բռնած արագ առաջ

ոանել գլխից բարձր, այսպես վոր բերանը դարձրած լինի դեպի առաջ, և շեղը ձեռքի շարունակությունը կազմի (նկ. 37):

Յերկրորդ նվազ—«Հատիր» կատարողական հրամանով իրանը դեպի աջ դարձնելու և դեպի աջ ու ցած թեքելու հետ միաժամանակ, հարված հասցնել ինչպես ցույց ե աված հոդ. 169-ում, բայց վերևից ներքեւ:



Նկ. 37.

Նպատակը հարվածելուց հետո. շեղը պահել «թուրն ի մարտ» դրության մեջ:

171. Ցած ձախ հարվածը հասցվում է ճիշտ այնպես, ինչպես ցած աջ, միայն իրանը պետք է գարձնել և թեքել դեպի ձախ և ներքեւ (նկ. 38 և 39):

172. Շեղմի կամ նիզակի վանումները կատարվում ե գեպի աջ, ձախ և դլուխը պաշտպանելու համար:

Վանումների համար հրաման ե տրվում աջ (ձախ) վԱՆԻՌ :



Նկ. 38.

173. Այ վանելու համար, նախապատրաստական հրամանով պետք ե բռնել չեղբի յերախակալը չորս մատներով ընդդրկած և արագ տանել դեպի առաջ ձեռքն ամբողջովին մեկնած այնպես, վոր ձեռքի դաստիակը լինի աջ ուսից մի քիչ ցած, իսկ չեղբի ծայրը,

վարն ուղղված և առաջ մի քիչ վերև. չեղբի բերանը պետք ե դարձած լինի դեպի աջ:

«Վանիր» կատարածական հրամանով իրանն արագ առաջ տանել, ընդունել հակառակորդի շեղբը (կամ նիզակը) իր չեղբի մարտական ծայրով և ձեռքը բարձրացնելով չեղբը բռնած՝ վանել հակառակորդի շեղբը (կամ նիզակը) դեպի աջ:



Նկ. 39.

174. Վերոհիշյալի համեմատ կատարվում ե գեպի ձախ վանելը չեղբը բռնած մեկնած ձեռքով դեպի վզի ձախ կողմը. այս գեպիքում չեղբի բերանը պետք ե դարձրած լինի դեպի վեր:

175. Գլխի պաշտպանության համար, պետք ե չեղբը հորիզոնական գրությամբ պահել գլխի վերեւում, ուսերի զծով, բերանը դեպի վեր:

176. Հակառակորդի շեղբի կամ նիզակի վանամից
անմիջապես հետո, պետք է հետևի խիթ կամ հարված
հակառակորդին, վորից հետո շեղբը պետք է պահել
«թուրն ի մարտ» դրության մեջ:

2. Ն. Ի. Զ. Ա. Կ.



Նկ. 40.

177. Նիզակը—պաղպատից ե, կլոր, մեջը գառաքի՝
մատ 25 մմ. տրամադրով, յերկարությունը—0,27 մ.։
Նիզակի վրա կա. յերեք ող, որին կուտի, վո-

աբ փոկէ մերք և յերկա. կանթ վոտի մերքն ամբացնելու
համար։ Նիզակն ունի սուր և բութ ծայրեր։

Նիզակի ծանրության կենտրոնը գտնվում է մոտա-
վարապես նիզակի սուր ծայրից 1,82 մ. վրա։ Նիզակի
բաշն և 2,662 կիլոգրամ։

ա) Կանոններ նիզակը բոնելու համար՝ ձի նստելու և
նրանից իջնելու ժամանակ։

178. Սանձած և թամբած ձին համաձայն հոդ. 1-ի-
նում ցույց տված կանոնների տեղում պահելու ժամա-




Նկ. 41.

նակ, նիզակը պետք է պահել ձախ ուսի մատ, բութ
ծայրը ձախ վոտի թաթի ծայրի մոտ, նրա դրսի կողմից։

Ձախ ձեռքը, վոր ազատ կախ է ընկած նիզակի կո-
ղի վրայով, չորս մատով ընդդրկում և նրան դրսից։

իսկ բութ մատով—յետեից, նիզակի ներսի կողմից։ Յերախճանիք յերասանակների կարգած ծայրը հագցվում է ծախ ձեռքին։ Շարժման ժամանակ ձիավորը նիզակը կրում է ծախ ուսի վրա, բութ ծայրը ներքև, պահելով այն ծախ ձեռքով ձեռքի մեջն առաջ յերախճանիք յերասանակների ծայրերի հետ միասին (նկ. 40 և 41)։



Նկ. 42

179. ՀԵԾԻՐ հրամանը կատարվում է (համաձայն Հոդ. 3-ի), յերեք նվագով, ընդ վորում առաջին նվագը կատարելուց առաջ ձիավորը պետք է բռնի ծախ ձեռքով նիզակի կոթը մեջ տեղից, իսկ դառնալուց և կես քայլ դեպի աջ անելուց հետո, նիզակը պետք է դնի ձիու քայլ վեպի աջ անելուց հետո, նիզակը պետք է դնի ձիու

բաշի վերջին մասի վրա, նրա բութ ծայրը հենելով գետնին՝ ձիու առջևի վուներից մի քայլ դեպի ձախ կողմը։ Հետո պետք է վարվել համաձայն Հոդ. 3-ի, բայց աջ վորը դեռ յելս ասպանդակը չդրած, նիզակը պետք է վերցնել աջ ձեռքով բռն մեջ առած և ձգել այն յերեկու անդամ դեպի վեր և նորից բռնելով, իսկ յերբ նիզակի բութ ծայրը կհալասարվի։ Թամբի կեղի հետ, նիզակը բութ ծայրով տեղափոխել ձիու բաշի վերջին մասի վրայով, ցած իջեցնել այն, մերքը հագցնել աջ




Նկ. 43

գառի թաթի ծայրի վրա, վորը դնել ասպանդակի մեջ և նիզակը դեմ անել աջ ուսին. դրանից հետո յերասա-


նակները զատել և աջ ձեռքը ցած թոզնել նիզակի կօթի
յերկարությամբ մատերը դեպի ցած (նկ. 42, 43, 44
և 45) :

180. Իջի՞ր հրամանը կատարվում է համաձայն հոդ.
8-ի, յերեք նվագ, ընդ վորում առաջին նվագը կատարե-
լուց առաջ դեռևս յերախճանի յերկու յերասանակը
ձախ ձեռքում բռնած, նիզակի մերքը պետք է հանել




Նկ. 44.

աջ վոտից, նիզակի բութ ծայրը տեղափոխել ձիու բար-
շի վերջին մասի վրայով նրա ձախ կողմը և, նիզակը
ձախ ձեռքը տալով, դնել այն դետնի վրա ձիու ձախ
կողմից, ինչպես բացատրված և նախորդ հոդվածում.



Նկ. 45.




Նկ. 46.

սրանից հետո սկսաք և կատարել բարով նվազները համաձայն հոդ. 8-ի, իսկ յերրորդ նվագում ձախ դարձի հետ միասին, բռնել նիզակն ինչպես ցույց և տված հոդ. 178-ում :

բ) Զեվեր նիզակով

181. Ձին հեծնելուց հետո ձիավորը պահում է նիզակն ուսի մոտ : Այդ դրության մեջ նիզակի բութ ծայրը գտնվում է աջ վոտի թաթի ծայրին հագցրած մեր



Նկ. 47

վրա, իսկ նիզակի կոթն աջ ուսի մոտ : Աջ ձեռքն աշղատ կերպով մեկնած ե նիզակի կոթի յերկարությամբ, չորս մատը մի քիչ կուացրած պետք ե դնել նիզակի կոթի վրա առաջի կողմից, իսկ բութ մատը գրկում է նիզակի կոթը յետելց (նկ. 45) :

182. Նիզակով վարժությունների ձեվերը հինգ ան .
1) Անզակն ուսին, 2) Անզակն ուսի յետելը, 3) Անզակը աեռքին, 4) Անզակն ազդրերի վրա և 5) Անզակն ի մարտ :

Նիզակի ձեվերը շարքում կատարվում է հրամաններով՝

183. Առանց հատուկ հրամանի նիզակը վերցնում են

1) ՈՒՍԻՆ—տեղում, իսկ շարժման ժամանակ «սրպու» և «հավսար» հրամաններով .

2) ԶԵՐՔԻՆ—շարժումն սկսելու հետ միասին :

3) ԱԶԴՐԻՆ—դիտակալների հակառակորդին մոտենալու ժամանակ, զորամասն արշավի անցնելիս :

4) ՈՒՍԻ ՅԵՑԵՎԸ—ձիապանների կողմից զորամարը ձիաթափ անելու ժամանակ :

184. ՆԻԶԱԿՆ ՈՒՍԻՆ հրամանը, յեթե նիզակը գլուխնվում է «նիզակը ձեռին» դրության մեջ կատարվում է յերկու նվազ :

Առաջին նվազ —աջ ձեռքով նիզակը դնել ուսի վոսում :

Յերկրորդ նվազ —մեկնել ձեռքը նիզակի կոթի յերկարությամբ և պահել այն ինչպես ցույց և տրված հոդ. 181-ում :

185. ՆԻԶԱԿԸ ԶԵՐՔԻՆ հրամանը, կատարվում է յերկու նվազ :

Առաջին նվազ —աջ ձեռքով բռնել նիզակը բռանքեց առած՝ ուսի մոտ և պահել ուղղաձիգ :

Յերկրորդ նվազ —ձեռքի դաստակը դեպէ ցած

տանել, վորակազի նա ձախ ձեռքի բուռնցքի բարձրության վրա լինի (նկ. 46) *):

186. ՆԻՉԱԿՆ ՈՒՍԻ ՅԵՑԵՎՀ հրամանը յեթե նիզակը դատնվում է «ձեռքին» կամ «ուսին» դրության մեջ, կատարվում է յերկու նվագ:

Առաջին նվագ — նիզակը թեքելով դեպի ձախ ձեռքը և այդ ձեռքով պահելով այն, աչ ձեռքն անցկացնել նիշտակի սրբտիքի միջով:

Յերկրորդ նվագ — նիզակը դցև ուսի յետեվը և աջ ձեռքը զնել ձախի վրա (նկ. 47):

187. Յեթե հարկ է լինում 2—3 նիզակ բռնել, այն դեպքում պետք է նրանց մերքերը հաղցնել աջ վոտի վրա, աջ ձեռքն անցկացնել բոլոր սրբտիքների միջով և դցել նիզակներն ուսի յետերը:

Նիզակները դցում են ուսի յետեր ուազմեթի, նույնպես և թրերը հանելու ժամանակ:

188. Յերբ «նիզակը ձեռքին» կամ «ուսին» և, այն ժամանակ ՆԻՉԱԿՆ ԱԶԴՐԻ ՎՐԱ հրամանը՝ կատարվում է յերկու նվագ:

Առաջին նվագ — աջ ձեռքը տեղափոխել դեպի վեր նիզակի յերկայնությամբ մինչեւ նրա ծանրության կենտրոնը, նիզակը մի փոքր բարձրացնել դեպի վեր և աջ վոտն ասպանդակից հանելով, հանել մերքը վոտի թաթի ծայրից:

* 46-րդ նկարում նկարված է ձիավոր լրիվ մարտական սպառազենքով, հանդերձանքով, ուսընդանության հակած հակագաղով, վոր հարդարված է փորձի համար կրելու մինչեւ հակագազ կրելու կանոնների հաստատումը:

Յերկրարդ նվագ — նիզակի սուր ծայրը թեքելով դեպի ձախ, ձեռքը դնել ազդելի վրա (տասը սանտիմետր ազդելից ցած) և աջ վոտը դնել ասպանդակը: Նիզակի սուր ծայրը պետք է լինի մոտ տասը սանտիմետր ձիու աջ ականջից բարձր և առաջ (նկ. 48):

Նիզակներն ազդելի վրա վերցնում են առանց վոր-յեվե հատուկ հրամանի հակառակորդին մոտենալու ժամանակ արշավի անցնելուց հետո:


189. Յերբ «նիզակը ձեռքին» և, այն ժամանակ ՆԻՉԱԿՆ Ի ՄԱՐՏ հրամանը կատարվում է յերկու նվագ:

Առաջին նվագ — աջ ձեռքը տեղափոխել դեպի վեր նիզակի յերկայնությամբ մինչեւ նրա ծանրության կենտրոնը, նիզակը բարձրացնել դեպի վեր և աջ վոտը հանելով ասպանդակից հանել մերքը վոտի թաթի ծայրից:


Յերկրորդ նվագ — նիզակի սուր ծայրն իշեցնել այնպես, վոր նիզակի կոթի առջեկի մասը ձիու աջ աչքից միքից ցած լինի և նիզակի կոթն արմունկով սեղմել մարմնին: Աջ ձեռքի դաստակով ամուր կերպով ափի մեջ առած բռնել նիզակը ցածից մատները, բացի բութ մատից, պետք է յեղունդներով դարձած լինեն դեպի վեր, բութ մատը մի քից բաժանվում է մյուսներից և պահվում է նիզակի կոթի յերկայնությամբ (նկ. 49):

190. Յերբ «նիզակն ազդելի վրա» յե այն ժամանակ ՆԻՉԱԿՆ Ի ՄԱՐՏ հրամանը կատարվում է մեկ նվագ — նիզակը թեվի տակն առնել և նիզակի կոթը սեղմել մարմնին, նիզակի դրությունը պետք է լինի այնպես, ինչպես ցույց է տված հոդ. 189-ում:

191. Յերբ «նիզակն ի մարտ» դրության մեջ և, այն ժամանակ ՆԻՉԱԿՆ ԱԶԴՐԻ ՎՐԱ հրամանը կատարվում է մեկ նվագ — բայց նիզակի առաջական առաջական պահանջման մոտ գործ է պահանջման մոտ:



Ակ. 48.



Ակ. 49.

192. Յերբ «նիզակն ազգուի վրա» յէ այն ժամանակ նիջլկն ՈՒՍԻՆ ԿԱՄ ՆԻՋԼԿՆ ՈՒՍԻՆ ՅԵՏԵՎԼԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ կատարվում են յերկու նվագ :

Առաջին նվագ — բարձրացնել նիզակը և նրա մերքը հագցնել վոտին :

Յերկրորդ նվագ — նիզակը դնել ուսին կամ ձեռքը սրեափքի մեջ մացնել և նիզակը զցել ուսի յետել :

193. Յերբ «նիզակն ի մարտ» ե, այն ժամանակ ՆԻՋԼԿՆ ԶԵՌՔԻՆ ՀՐԱՄԱՆԸ կատարվում ե յերկու նվագ :

Առաջին նվագ — նիզակի սուր ծայրը քիչ բարձրացնել զեպի վեր և ցածի մերքը հագցնել վոտի վրա :

Յերկրորդ նվագ — նիզակը սուր ծայրը քիչ բարձրացնել հոգածայն հող . 185-ի :

Դ) ԽԻԹԵՐ, ԽԱՐՎԱԺԵՆԵՐ և ՎԱԼՈՎԱՆԵՆԵՐ

Կ Ի Թ Ե Բ

194. ԲՈԼՈՐ ԽԻԹԵՐԸ ՀԱՍԳԵՆՈՒՄ ԵՆ «ՆԻԶԱԿՆ Ի ՄԱՐՄ» ԿՐՈՒԹՅՈՒՆԻց :

ՅԵԹԵ ՆԻԶԱԿԸ յեղել ե վորեւ այլ դրության մեջ, այն ժամանակ ԽԻԹԵՐ ՆԱԽԱՊԱՄՐԱՍՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ՆԻԶԱԿՆԵՐԸ վերցնում են «ի մարտ» դրությամբ :

195. ՆԻԶԱԿՈՎ ԽԻԹԵՐԸ կարելի յէ հասցնել շարժան ժաման ժամանակ և տեղում :

Շարժման ժամանակ խիթեր հասցնելու համար նիզակի սուր ծայրը, վոր առաջ ե դարձած ուղղում և հակառակորդին և նիզակի կոթը սեղմվում ե աջ ձեռքի ծղիով, խիթը պետք ե հասցնել ձիու շարժման ուժով, և վոչ թե ձեռքը խիթելու ըուղելին նպատակի կողմը տանելով (նկ. 50) :


Տեղում խիթելու համար նիզակի սուր ծայրը, վորն ուղղված ե նպատակին, արագ և ուժով մղվում:

և ձեռքով նպատակի կողմը և նրան հարվածելուց հետո, նույն արագությամբ յետ ե քաշվում:

196. Խիթերը լինում են. 1) աջ և կես դարձ աջ, 2) ձախ և կես դարձ ձախ, 3) ձախ յետ, 4) յետ արմունկից, 5) ցած աջ, 6) ցած աջ կարքածն (օտրօղ) և ցած ձախ կարքածն:

197. Հրաման. ձախ (կես-պտույտ ձախ) — ԾԱԿԻՇ. կատարվում ե յերեք նվագ.

Առաջին նվագ. իրանը թեքել հենվելով ժախ աստպանդակին, ամբողջ իրանով դառնալ աջ (կես դարձ աջ) և նիզակի սուր ծայրն ուղղել նպատակին:



Նկ. 50.


Յերկրորդ նվագ. նիզակն առաջ տանել մեկնելով աջ ձեռքն ամբողջովին խիթն ուղեկցելով ամբողջ իրանի շարժումով, իրանի հենումը տեղափոխել աջ աստպանդանակի վրա և նպատակը հարվածելուց հետո նիզակն արագ յետ քաշել:

Յերրրորդ նվագ. իրանը դարձնել նախնական դրությամբ և նիզակը վերցնել «ի մարտ»:

198. Ձախ (կես-պտույտ ձախ) — ԾԱԿԻՇ. Հրամանը կատարվում է յերեք նվագ. նախապատրաստական հրամանով նիզակի սուր ծայրը բարձրացնել կզակի բարձրության:

Առաջին նվագ. մարմնի ծանրությունը տեղափոխելով աջ ասպանդակի վրա և իրանը դարձնելով ձախ (կես-դարձ ձախ), նիզակի գեղարդը տեղափոխել ձիու (կլիփ վրայով դեպի ձախ և ուղղել այն նպատակին:

Յերկրորդ նվագ. նիզակն արագ առաջ հանել աջ ձեռքն ամբողջովին մեկնած խիթ հասցնել նպատակին,



Նկ. 51.

Առաջեկցելով այն ամբողջ իրանի շարժումով և նպատակը հարվածելուց հետո, յետ քաշել նիզակը: Յերրրորդ նվագ. նիզակը տեղափոխել «ի մարտ» դրության:

199. Զախ յետ—ԾԱԿԻՌ հրամանը կատարվում է յերեք նվագ։

Նախապատրաստական հրամանով սուր ծայրը և բարձրացնել սուր ծայրը։

Առաջին նվագ՝ արագ դաւնալ ամրող իրանով դեպի ձախ յետ և նիզակի սուր ծայրը տեղափոխելով ձիու զլիի վրայով, ուղղել այն՝ նպատակին (նկ. 51)։

Յերկրորդ նվագ՝ արագ կարճ խիթ հանցնել դեպի ձախ յետ, նպաստելով նրան ձեռքի և իրանի շարժումով և, նպատակը հարվածելուց հետո արագ յետ քաշել նիզակը։

Յերրորդ նվագ՝ իրանը դարձնել սկզբնական դրության և նիզակը վերցնել «ի մարտ»։


200. Արմունկով ձախ յետ—ԾԱԿԻՌ հրամանը կատարվում է յերեք նվագ։

Առաջին նվագ՝ նիզակի սուր ծայրը տեղափոխել ձիու զլիի վրայով գեպի ձախ, նիզակը պահել ձախ ձեռքի բութ մատով յերասանակի վրա և իրանը դեպի նիզակի բութ ծայրի կողմէն արագ տանելով, նորից բանել այն ամրող յերկարությամբ մեկնած աջ ձեռքով, վորքան հնարավոր և նրա բութ ծայրին մոտ (նկ. 52)։


Յերկրորդ նվագ՝ գնել նիզակի կոթը ձախ արմունկի ծալի մեջ և նիզակի սուր ծայրն ուղղելով նպատակին, իրանը խիթի կողմը տանելով, արագ հղել աջ ձեռքով նիզակը խիթի կողմը և նպատակին հարվածելուց հետո յետ քաշել նիզակը (նկ. 53)։

Յերրորդ նվագ՝ նորից բոնելով աջ ձեռքով նիզակը մեջտեղից և գնել նրան ի մարտ գրության մեջ։

201. Յած աջ—ԾԱԿԻՌ հրամանը կատարվում է յերկու նվագ։



Նկ. 52



Նկ. 53

Առաջին նվագ. նիզակի ծայրն իջեցնել դեպի ցած
առանց նիզակի կոթն արմունկի տակից բաց թողնելու
և ուղղել այն նպատակին, ողել նիզակն աջ ձեռքով և
նպատակը հարվածելուց հետո, արագ յետ քաշել ձեռ-
քը:

Յերկրորդ նվագ. նիզակը բռնել «ի մարտ» դրու-
թյան մեջ:

202. Ցած աջ կարքաձև—ԾԱԿԻՌ Հրամանը կա-
րելի յէ կատարել յերկու յեղանակով, ամեն մեկը
չորս նվագ :

ա) ԱՌԱՋԻՆ ՅԻՂԱՆԱԿ

Առաջին նվագ. նիզակը բռնած աջ՝ ձեռքը մեկնել
ու բարձրացնել դեպի վեր և աջ, դլխից բարձր
(նկ. 54):


Յերկրորդ նվագ. նիզակը դեպի վեր ձգել և բռնել
այն նրա ծանրության կենտրոնում, բութ մատը դեպի
իրեն պահած (նկ. 55):

Յերրորդ նվագ. նիզակի ծանրության կենտրոնում
բռնած մեջ առած պահելով, նրա սուր ծայրն ուղղել դե-
պի ցած, կարճ հարված հասցնել նպատակին և անմի-
ջապես յետ քաշել նիզակը (նկ. 56):


Չորրորդ նվագ. նիզակի սուր ծայրը շարժելով
դեպի ձիու դափակը և դեպի վեր, նիզակը դարձնել և
դնել այն «ի մարտ» դրությամբ (նկ. 57):

բ) ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ (նորից բռնելով)

Առաջին նվագ. նիզակի «ի մարտ» դրությունը
չփոխելով, արագ բռնել այն աջ ձեռքի դաստակով
տյապես, վոր չորս մատը բռնի ընդդրկած վերի կողմից
և յեղունդները դեպի ձախ, իսկ բութ մատը— ներքեմից
և ձախից, յեղունդը դեպի իրեն:




Նկ. 54



Նկ. 55

Յերկրորդ նվազ . արագ բարձրացնել աջ արմաւճկը դեպի վեր , նույն ձեռքի դաստակով նիղակը շուր տալ թեփ տակից (պտտելով նրան) բութ ծայրով դեպի ցած , առաջ և վեր այնպէս , վոր նիղակի սուր ծայրն ուղղված լինի դեպի առաջ , իսկ ամբողջ նիղակը մեկնած աջ ձեռքով տարվի դեպի աջ և վեր դիմից բարձր :




Նկ. 56

Յերրորդ և չորրորդ նվազները նույն են ինչ վոր առաջին յեղանակում

203. Ներքի ձախ կարքածի—ԾԱԿԻՐ , Հրամանը կատարվում է չորս նվազ :

Առաջին և յերկրորդ նվազները նույն են , ինչ վոր հոգ . 202-ուժն է (առաջին յեղանակ) :

Յերրորդ նվազ . նիղակի սուր ծայրը տեղափոխել ձիու գլխի վրայով և թեղվելով դեպի ցած , ուղղել նպատակին , ապա ամբողջ իրանն ու ձեռքերը արագ տանել նպատակի կողմը , իսկ հասցնել նրան , դրանից հետո անմիջապես յետ քաշել ձեռքը դեպի աջ ուսը (նկ. 58) :



Նկ. 57


Չորրորդ նվազ . նիղակի սուր ծայրը տեղափոխել ձիու գլխի վրայով և պտտելով նիղակը ձիու աջ կողմում դեպի ցած , յետ և վեր , դնել այն «ի մարտ» երության մեջ , արմունկով սեղմել և բռնել դաստակով դածից ընդգրկած , յեղունդները դեպի վեր ուղղված :

Հ Ա Բ Վ Ա Ճ Ն Ե Ր


204. Հարվածները լինում են. 1) դեպի յետ քայլայրակ, 2) նիզակի ծայրով հակառակորդի ձիու գրևիթին և 3) ամբողջ նիզակով ձիավորի աջ (ձախ) կողմին:



Նկ. 58



Նկ. 59



Նկ. 60

205 Դեպի յետ քութ ծայրով — ԶԱՐԿԻՌ, հրամանը կատարվում է յերեք նվազ:

Առաջին նվազ. իրանը դեպի աջ և յետ դարձնելու (նպաստակը տեսնելու համար) և այն դեպի ձիու վեցը թեքելու հետ միաժամանակ նիզակն հորիզոնական ուղղությամբ դեպի ձիու գլուխը մեկնել ամբողջ ձեռքի չափով, ազատելով այն արմունկի տակից:

Յերկրորդ նվազ. նիզակը նպաստակին ուղղելով,
խփել նրանով դեպի յետ ամբողջ աջ ձեռքի խիստ մեծ
թափով, հարվածը հասցնելուն նպաստելով իրանը դե-
պի նույն կողմը արագ թեքելով:

Նպաստակին հարվածելուց հետո նիզակը արագ
յետ քաշել (նկ. 59):

Յերրորդ նվազ. իրանը նախկին դրությանը դար-
ձնելուց հետո, նիզակը պահել «ի մարտ» դրության
մեջ:

206. Զիուն և հակառակորդին ամբողջ նիզակով
կամ նրա ծայրով հարվածներ հասցնելու համար—
կանոնազրքային ձևեր չկան: Այդ հարվածները հաս-
ցնում են ինչպես հարմար և այն դեպքերում, յերբ ան-
հնար և իմիթով գործել:

Վ ա ն ո ւ մ ն ե ր

207. Վանումը լինում է. աջ, ձախ և գլուխը
պաշտպանելու համար:

Վանումը կատարվում և նիզակի կոթով— նրա
մարտական ծայրով (նիզակի սուր ծայրի և ծանրու-
թյան կենտրոնի միջև):

208. Խիթերի, հարվածների և վանումների ժա-
մանակ ձախ ձեռքի դաստակը պետք է բոլորովին ան-
շարժ լինի, վորպեսզի յերասանակով չանհանդստացնի
ձիու բերանը:

Գ. I. II Կ Կ VII

ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ ԶԻՈՒ ՎՐԱՅԻՑ

ա) ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՅԱՆՈՎ.

209. Հրաձգություն ձիու վրայից կարող են կա-
տարել միայն անհատ ձիավորները տեղում կանգնած:

210. Հրաձգության համար հրացանն ուսից հանե-
լու համար պետք է առանց յերասանակները ձախ ձեռ-
քից բաց թողնելու, հակագազի պայուսակը տեղավորել
հրացանի փոկի տակ, աջ ձեռքով բռնել ագուստի
հորից բուան մեջ առաջ և հանել հրացանի փոկը գլխի
վրայով:

Հրացանը հանելով և ձախ ձեռքը տալով այն, աջ
ձեռքով նորից բռնել հրացանն այնպես, վոր նա լինի
հանոցի կողդի և ցածի ողի միջև դրանից հետո հրա-
ցանի կոթը պետք է դնել աջ ազդրի վրա փողաբերանը
թեքելով մի քիչ աջ և առաջ:

Նիզակ ունեցող մարտիկը, հրացանը հանելուց ա-
ռաջ, պետք է բռնի ձախ ձեռքով նիզակը, իսկ հրա-
ցանը հանելուց հետո, ձեռքն անցկացնել որետիքի մի-
ջով իսկ նիզակը ցցել ուսի յետեւ:

211. Հրացանի լցնելը, կոթն ուսին դեմ տալը, նր-
շանառությունը և հենց ձիգը կատարվում է առանց
հրամանների, զեկավարվելով ԲԳԿԲ հրաձգու-
թյն կանոնագրքի կանոններով, ընդ վորում յերասանա-
կը պետք է բոլորովին ազատ բաց թողնել, վորպեսզի
ձիգ կատարելուն չխանդարի:

212. Զիգ կատարելու համար պեաք և ձին նպատակի նկատմամբ կիսադարձ կանգնեցնել և այնպես, վոր ծիփի ուղղությունը լինի դեպի ձիու ձախ ուղիղողքը:

Զիգ կատարելու ժամանակ պիտի նստել թամբի մեջ ըստ հնարավորին անշարժ: Ծնկները պետք է պինդ սեղմել թամբին:

213. Հրացանը մեջքին գցելու համար պետք է բարձրացնել այն (բաց չթողնելով յերասանակները) հրացանի փոկն անցկացնել դիմի վրայով և հրացանն իջեցնել մեջքին. դրանից հետո աջ ձեռքով հակագազի պայուսակը տեղավորել հրացանի փոկից վերև:

Նիզակ ունեցող մարտիկը նախապես սրետիքը չունում է աջ ձեռքից և նիզակը տալիս է ձախ ձեռքը:

բ) ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆ ԱՏՐՃԱՆԱԿՈՎ

214. Զիու վրայից ատրճանակով հրաճկությունը կարելի յե կատարել դեպի ամեն կողմ՝ ինչպես տեղում, նույնպես շարժման ժիջոցին:


Յեթե անհրաժեշտ է ատրճանակից արձակել հանոծ թուրը ձեռքին, վերջինիս բոնատեղը պետք է բաց թողնել ձեռքից և շեղը թողնել ազատ կախած որետիքից:

215. Զիգ կատարելուց առաջ պետք է ատրճանակի պատյանը բաց անել, հանել ատրճանակը և առնել աջ ձեռքն արմունկը կոպացրած, այս դեպքում ձեռքի զարտակը պետք է լինի աջ ուսի դիմաց և մի քիչ բարձր, իսկ ատրճանակի փողաբերանը—դեպի վեր ուղղված:

216. Ատրճանակը լցնելը և հրաճկությունը կատարվում է առանց հրաժաների, զետնից ատրճանակով հըրածքություն կանոնների համեմատում:

Զիգ կատարելու ժամանակ յերասանակները չեն թուլացվում, իսկ ծնկները հնարավորության չտփ պինդ սեղմվում են դեպի թամբը:

217. Հրաճկությունը վերջանալուց հետո տարհանակը դնել պատյանի մեջ և վերջինիս ծածկիչը կոճկել:



Նկ. 61

Ազդանշանի փողերը բռնելու կանոնները

218. Ազդանշան տալուց առաջ (բոլոր տեսակի քելքերի ժամանակ), պետին դիմավորելու և մոռով անցնելու ժամանակ ՓՈՂԵՐԸ ՎԵՐՑՆԵ՛Լ հրաժանով փողհարներն իջեցնում են ազդանշանի փողերը քզի ամբողջ յերկարությամբ, վերցնում են նրան աջ ձեռքով բռանքեց առաջ ոլորանի վերին մասի մոտ և փողի լայն բերքում դնում են ազդերի վրա, ափի չափ ծնկից վեր, իսկ բանը դնում են ազդերի վրա, ափի չափ ծնկից վեր, իսկ ոլորանը դեպի աջ (Նկ. 61):

219. Ազգանշան տալու համար պետք է բարձրանալ ասպանդակների վրա և իրանը դարձնելով՝ ազգանշան առջև կողմը բռնել փողն այնպես, վոր նրա լայն բերտութարձրած լինի դեպի վեր (նկ. 62):



նկ. 62

220. **ՓԱՂԵՐԸ ԿԱՊԵՒՆ** հրամանով՝ փողերը կապ են գցում գոտուց մի ափ բարձր աջ կողմից, փողի բերանը դեպի առաջ:

ՀԱՏՎԱԾ II

ԳԼՈՒԽ VIII

ՀԵՏԻՈՏՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ա) ԿԵՑՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՏԵՂՈՒՄ

221. Շարքում պետք է կանգնել ուղիղ առանց ձըդվելու: Կրունկներն իրար կպած, թաթի ծայրերն իրար հեռացնել ճակատի գծով հրացանի կոթի լայնության չափով, ծնկները պետք է պահել ուղիղ, բայց առանց ձգվելու: Կուրծքը քիչ բարձրացնել: Ամբողջ մարտինը մի քիչ առաջ տալ թաթի ծայրերի վրա, փորը ներս քաշել, բայց գոտիկատեղը չկուցնել: Ուսերը բաց անել: Զեռքերն ազատ թողնել այնպես, վոր ափերը գեպի ներս դառնան և դաստակները լինեն կողքի և ազդրերի մեջ տեղում: Մատերը քիչ ծալած: Գլուխու պահել ուղիղ, կրակը գուրս չցցել, նայել ուղիղ առաջը:

Ուղիղ կեցվածք ընդունելու համար հրաման և տըրակում ՇԱՐՎԱՌԻՌ:

222. Յեթի թուրը հագած է, այդ լեպքում ձախ ձեռքի դաստակը կիսածալած մատներով պետք է դնել պատյանի վրա ազատ, առանց բռնելու:

223. **ԶԳԱՎԱԾ** հրամանով, պետք է ամեն տեսակի շարժում դադարեցնել: Նույնը կատարվում է յուրաքանչյուր նախապատրաստական հրամանի ժամանակ, յեթե մինչև այդ թույլատրված է յեղել ազատ կանգնել:

224. **ԱԶԱՎԱԾ** հրամանով, առանց իր տեղը թողնելու պետք է կանգնել ազատ: Թույլատրվում է խոսել վաչ

բարձր ձայնով և յեթե հարկավոր ե շակել հակուստը և
և հանդերձանքը : Յեթե հարկավոր լինի շարքից դուրս
գալու այդ դեպքում թույլատվության համար պետք է
դիմել մերձավոր հրամատարի միջոցով :

225. Դարձումները կատարվում են շրջանի $\frac{1}{8}$ -ի,
 $\frac{1}{4}$ -ի, և $\frac{1}{2}$ -ի չափով և կատարվում են հետեւյալ հրա-
մաններով *)

1. Կես-ազ (կես-ձախ) ԴԱՐՁ :
2. Ազ ԴԱՌՁ (ՁԱԽ ԴԱՌՁ) :
3. ՑԵՍ-ԴԱՌՁ :

Ի՞նչոր դարձումները շրջանի համապատասխան ժամի
չափով կատարվում են, դեպի ձախ կողմը—ձախ կրնկի
և աջ թաթի վրա . աջ կողմը—ընդհակառակը : Դարձում-
ների ժամանակ ամբողջ մարմինը պետք է դարձնել այն-
պես, վորպեսզի ուսերը վոտքերի շարժումից յետ չմը-
նան : Դարձումից հետո յետ մնացած վոտը պետք է մյու-
սի ժողո դնել :

բ) ՔԱՅԼ, ՎԱԶ ՑԵՎ ԴԱՄՉՈՒՄՆԵՐ ՔԱՅԼԵԼԻՄ ՑԵՎ
ՎԱԶԵԼԻՄ

226. Քայլով շարժման համար, հրաման և արվում
ՔԱՅԼ—ՄԱՌՇ :

Այդ հրամանով իրանը մի քիչ առաջ
տանել, ձախ վոտն ազատ կերպով տանել շարժման
ուղղությամբ, ծունկը շատ չծալել, վոտը գետնին դը-
նել ամբողջ ներքանով, միաժամանակ աջ վոտը կտրել
գետնից, առաջ տանել և դնել գետնին այն, պահպանե-
լով նույն կանոնները, և այդպես շարունակել տըրողի

շարժումը : Ջեռքերը մարմնի շուրջն ազատ շարժել
մատները քիչ ծալած թեթև բոռւճքը կազմած, իսկ
արմունկները ծալելով այնպես, վոր դաստակներն ա-
ռաջի կողմից բարձրանան մինչև վոտու բարձրությու-
նը : Զախ վոտն առաջ տանելիս—պետք է առաջ տանել
աջ ձեռքը, աջ վոտքի հետ—ձախ ձեռքը :

Քայլով շարժման նորմայի արագությունը մեկ րո-
պեցում 120 քայլ ե, քայլի չափը 75 սանտիմետր :

Քայլով շարժման արագացմանը պետք է հասնել
վոչ թե քայլի արագացումով, այլ յերկարացումով
(լայն քայլ) :

227. Դարձումները քայլելիս տեղի յեն ունենաւ
շրջանի $\frac{1}{8}$ -ի, $\frac{1}{4}$ -ի, $\frac{1}{2}$ -ի չափով և կատարվում են
հետեւյալ հրամաններով : Կես-ազ (ձախ) դարձ և աջ
(ձախ) ՑԵՏ-ԴԱՌՁ ՄԱՌՇ :

ա) Դեպի աջ (կես աջ) դարձումների համար, կա-
տարողական հրամանը տրվում է այն ժամանակ յերբ
դետնին և դրվում աջ վոտը : Այդ հրամանով պետք է
ձախ վոտով ելի մի քայլ անել, հետո այլ վոտի թաթի
ծայրի վրա դառնալ, և դարձման հետ միաժամանակ
առաջ տանել աջ վոտը նոր ուղղությամբ—ապա չտ-
րունակել շարժումը :

բ) Դեպի ձախ (կես-ձախ) դարձման համար, կա-
տարողական հրամանը պետք է տալ ձախ վոտը զետին
դնելիս, իսկ դարձումը կատարել աջ վոտի թաթի ծայ-
րի վրա :

գ) Ցետա դառնալու համար կատարողական հրա-
մանը պետք է տալ, յերբ գետնին և դրվում աջ վոտը:
Այդ հրամանով ձախ վոտով ևս մի քայլ պիտի անել, աջ
վոտը կես-քայլ առաջ տանել, յերկու վետերի թաթերի

*) Նախապատրաստական հրամանը տըրում է լիբ-
կարածիդ, կատարողականը—կարճ :

ծայրերի վրա դառնալ և շաբժումը շաբանակել ձափիստից :

228. Վազով շարժվելու համար հրաման և որվուժ վազով—ՄԱՐՅ :

Նախապատրաստական հրամանով ձեռքերի արմունկները ծալել և ձեռքերի գաստակներն աղատ սեղմած բուռնցքներով պահել արժունիկների բարձրության վրա, արժունկները քիչ դեպի յետ տանել : Կատարողական հրամանով —շարժումն ակսել ձախ վոտից :

Թուրը հագած ժամանակ յերբ շեղը պատյանի մեջ և, ձախ ձեռքով պետք ե թուրը պահել պատյանից բռնած յերկրորդ և յերրորդ մատներով ընդդրկած և այնպէս, վոր բութ մատը գտնվի առջեկի կողմից և յեղունդով դեպի նեսի կողմը, իսկ մնացած չորս մատը դրսից, յետեկի կողմից, յեղունդները դեպի ներս՝ Պատյանի ծայրը մի քիչ դեպի առաջ տալ :

Վազի նորմալ արագությունը մի բողեյում 160 քայլ ե, քայլի չափը՝ 90 սանտիմետր :

229. Վազով շարժման ժամանակ գարձումները՝ կատարվում են նույն հրամաններով, վոր շույզ են տրված քայլելիս դարձումների համար :

230. Վազից քայլի անցնելու համար յերկարածիկ հրաման և տրվում. ՔԱՅԼՈՎ :

231. Շարժումը գագարեցնելու համար հրաման և տրվում ԿԱՆԳ ԱՌ :

Այդ հրամանով պետք ե ևս մի քայլ անել և կանգ առնել, յետ մնացած վուրը դնել մյուսի կողքին :

ԳԼՈՒԽ 19

ԶԵՆՔԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼԸ.

ա) ԶԵՎԵԲ ԹՐՈՎ

232. Հետիոտն ուսուցման ժամանակ, թուրը—ՀԱՆ հրամանով շեղը հանում են պատյանից և ուսին առնում յերեք նվագ :

Առաջին նվագը կատարվում է նախապատրաստական հրամանով, իսկ մյուսները—կատարողական :

Առաջին նվագ. աջ ձռքով բռնել յերախակալի բըռնատեղը և միաժամանակ ձախ ձեռքով պահելով պատյանը, (վորտեղ կհասնի աղատ թողած ձախ ձեռքի դաստակը), շեղը դուրս քաշել դեպի վեր ափի լայնությամբ :

Յերկրորդ նվագ. շեղըն արագ դուրս քաշել պատյանից և դաստակը դարձնելով վեր բարձրացնել սուրծայիլը, բերանը դեպի ձախ, ձեռքն ամբողջովին մեկնած, դաստակը գլխի վերեւում պահելով :

Յերրորդ նվագ. շեղըն արագ ցած թողնել և գնել այն կոնակով աջ ուսի վոսում, բռնատեղը բռնել ցուցամատով և միջին մատով դրսի կողմից, իսկ բութ ժամանով—ներսի կողմից. մյուս յերկու մատն աղատ կուացնել : Յերկու ձեռքներն ել պետք ե աղատ ցած թողնել; Թրի բերանը չպետք ե դարձնել վոչ աջ և վոչ ձախ :

233. Շարժումն սկսելուց առաջ «քայլով» կամ «վազով» նախապատրաստական հրաժանով շեղը վերցնում են յերկու նվագ։

Առաջին նվագ։ ձեռքերի յերկու դաստակները միացնելով իրեն առջևում յերախակալի բռնատեղը պետք է տալ ձախ ձեռքը, աջ ձեռքի բոլոր մատներով բռան մեջ առած բռնել յերախակալի բռնատեղի յետևի մասուց խղատակը, միևնույն ժամանակ շեղըն ուսից իջեցնել կռնակով դնել աջ արմունկի ձալքի մեջ։

Յերկրորդ նվագ։ յերկու ձեռքն ել ցած թողնել երենց տեղը, պահելով թրի յերախակալի խղատակն աջ ձեռքի ափի մեջ։

Շարժման ժամանակ շեղը բռնած աջ ձեռքը պետք է տղատ շարժում ունենա դեպի առաջ և յետ, արմունկը մի քիչ ծալելով։ Շարժման ժամանակ պատյանը պետք է պահել ձախ ձեռքով այն տեղից, վորտեղ կհասնի աղատ թողած ձեռքը, չորս մատը քիչ ծալած դրսից, իսկ բութ մատը յետելից և ներսից։ Պատյան բռնած ձախ ձեռքը շարժման ժամանակ մնում և անշարժ։

234. Շարժումը դադարեցնելու ժամանակ ԿԱՆԴԱՌԻ հրամանով առանց հատուկ հրամանի շեղը դնել ուսին յերկու նվագով։

Առաջին նվագ։ իրեն առջևում դուկից ցած յերկու ձեռքը միացնելով, յերախակալի բռնատեղի ձայրը ձախ ձեռքի ափին հենել և աջ ձեռքով բռնել թրի բըռնատեղն այնպես, վոր ցուցամատը և միջին մատը բռնեն նրան դրսի կողմից։

Յերկրորդ նվագ։ յերկու ձեռքն ել ցած թողնել ե-

րենց տեղը, իսկ շեղը կռնակով դնել աջ ուսի գոռամ։

235. «Թուրը հան» ձեմի յերրորդ նվագի դրությունից, քուրն իՄԱՐՏ հրամանով շեղը վերցվում է ի մարտ մի նվագ։ «Ի մարտ» կատարողական հրամանով ձախ ձեռքի արմունկը ծալել և պահել այն դրությամբ, ինչպես յերախանակը բռնելու համար։ աջ ձեռքի դաստակը շեղը բռնած դնել ձախ ձեռքի դաստակի վրա։ Եղբը պետք է պահել յերախակալը բըռնած՝ ցուցամատով և միջին մատով առջևի կողմից, իսկ բութ մատով յետելից։ Աջ ձեռքի դաստակը ձախի վրա դնելու հետեւ միաժամանակ, ձախ վորտը կես քայլեպի ձախ դաստակի ձախ դնել և, յերկու վորտքերի ծնկները կիսած նալելով, ընդունել ձիու վրա նսանելու դրությունը։

236. ԶԳԱՌՍ հրամանով մի նվագ շեղըն ուսին դնել, յերկու ձեռքն ել ցած թողնել իրենց տեղը և ձախ վորտը դնելով աջի մոտ, կանգնել զգաստ։

237. Թուրն ի ՊԱՏՅԱՆ հրամանով շեղը պետք և դնել պատյանը յերեք նվագ։

Առաջին նվագ։ աջ ձեռքով բռնել յերախակալի բըռնատեղը բռան մեջ առաջ շեղը սուր ծայրը վեր բարձրացնել, բերանը դեպի ձախ վորտեսղի յերախակալը կլիսից բարձր լինի, ձախ ձեռքով բռնել պատյանն այն տեղում, վորտեղ կհասնի ձախ ձեռքի դաստակը։

Յերկրորդ նվագ։ դումիւր պատյանի կողմը դարձընելու և թեքելու հետ միաժամանակ, ձեռքի դաստակով շեղը սուր ծայրը վար իջեցնել և ուզզել այն դեպի պատյանի բացվածքը, վորից հետո զլուխը պահել ուսի, շեղը մտցնել պատյանի մեջ և ձախ ձեռքի դաստակը պահել կզակի բարձրության վրա։

Յերբորդ նվագ-շեղբն ամբողջովին մտցնել պատ-
յանի մեջ, ձեռքը ցած թողնել իր տեղը և կեցվածք ըն-
դունել ինչպես ԶԴԱՌՍ հրամանով :

238. Յեթե շեղբերը հանված են պատյաններից
այն ժամանակ ԸՆԿԵՐ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ հրա-
մանով, հրամատարական կազմը, դասակի հրամա-
տարից սկսած և բարձր վողջունում են: Թրով վոր-
ջունը կատարվում է յերկու նվագ:

